

«DROSCHAK»

REVUE MENSUELLE

organe

de la F. R. A. D'

# ԴՐՕՇԱԿ

№ 6 DECEMBRE

1925

PARIS (France)

## «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՆԵՆ ԳՆԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

### ԻՆՖԵՆՈՐՄԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

ԵՒ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅՕՇՈՏՈՐՄԱՆ

Ակաջ մի խօսք, որ այնքան յաճախ հղյուված լինի բոլշևիկեան գրականութեան և քաղաքականութեան մէջ, որքան ազգերի ինքնորոշման իրաւունքը: Ի՞նչ միջև իշխանութեան տիրանալը բոլշևիկները բոլոր հողերի ուղղութեամբ յայտարարում էին, թէ ժողովուրդների միջև բնականն յարաբերութիւններ չեն կարող գոյութիւն ունենալ, մինչև որ նրանցից իւրաքանչիւրի, անգամ ամենափոքրիկի համար չապահովի սեփական ճակատագիրը ազատ և անկաշկանդ ձեւով տնօրինելու իրաւունքը: Այս իրաւունքի առաջ պէտք է տեղի տան բոլոր ռազմական, քաղաքական և տնտեսական նկատումները, ասում էին նրանք. պետութիւններն իսկ պէտք է կործանւին, եթէ նրանք արգելք են հանդիսանում ազգերի ինքնորոշման իրաւունքի գործադրութեան: Մենք կանգնած ենք այս տեսակետի վրայ և պատրաստ ենք պաշտպանել այն մինչև իսկ Ռուսաստանը բաժան-բաժան անելու գնով կարճ և նոյն բանն անել և Կ. Կառչկին Գերմանիայի վերաբերմամբ—յոթորտուներով բացականչում է Լենինը իր յօրաձեռնից մէկում, զեռ համաշխարհային պատերազմից առաջ:

Այդպիսիքերեան ապստամբութեան առաջին օրերին բոլշևիկները, ի գործադրութիւն այս սկզբունքի, ղեկընտով հրահանգին, որ Ռուսաստանի սահմաններում ապրող ազգերն ազատ են սեփական հայեցողութեամբ որոշելու պետական պատկանելիութեան խնդիրը: Այդ ղեկընտով նրանցից ամէն մէկին իրաւունք էր տրուած լուծել Ռուսաստանի քաղաքացիութեան մէջ, կամ առանձին ինքնավար կեանք ստեղծել իր համար. կապել Ռուսաստանում ապրող միւս ազգերի հետ դաշնակցական կապերով, կամ բոլորովին անջատել նրանցից և անկախ պետութիւն կազմել:

Ազգերի ինքնորոշման իրաւունքի այս թմբկահարութիւնը գործնականում այն արդիւնքն ունեցաւ միայն, որ մի կարճատեւ ժամանակ բոլշևիկների համար որոշ հմայք ստեղծեց թէ՛ միջազգային աշխատակորութեան և թէ՛ մի շարք ճնշւած ժողովրդների մէջ, որոնք բոլշևիկեան ղեկէտը կատարած գործի հետ շփոթելու միտմտութիւնն ունէին դեռ եւս Առաջին անգամ էր պատմութեան մէջ, որ մի մեծ երկրի իշխանութիւն այնքան մեծահոգի, այնքան անվերապահ ձեւով իւրաքանչիւր ժողովրդի տէր ու տնօրէն էր «դարձնում» իր ճակատագրի, և, հասկանալի է, որ նման մի քալ ընդհանուր խանդավառութիւն պէտք է առաջ բերեր ամէն տեղ, ուր իշխողների բռնադատիչ կամքը օրէնքի ձեւով պարտադրուած է ճնշւածների բազմութեանը:

Սակայն երկար չտեսց այս խանդավառութիւնը: Քաղաքացիական պատերազմներից հազիւ օտքի կանգնած բոլշևիկեան իշխանութիւնը անմիջապէս հետամուտ եղաւ «Ռուսաստանը հաւաքելու», պետութիւնն ամբողջացնելու գործին և իր բոլոր դաւերը լարեց նախկին Ռուսաստանի հպատակ այն բոլոր ազգերի դէմ, որոնք ոչ միայն անկախ ապրելու կամքն էին զրսւնորիլ այլ և տարիներից ի վեր ապրում էին ուրոյն պետական կեանքով: Նրա դուրերի և ղինւորական հարածների տակ մէկը միւսի յետեւից ընկան Ուկրաինան, Ադրբեջանեան, Հայկական և Վրացական հանրապետութիւնները, և եթէ Ռուսաստանից անջատւած միւս անկախ պետութիւնները — ինչպէս Լիւվանիան, Լատուիան, Էստոնիան ևն — առ այժմ ազատ ձգեցին բոլշևիկ աշխարհայինների կողմից՝ սրա պտտածան այն էր միայն, որ նրանց համար այդ պետութիւնների միջնորդութիւնն անհրաժեշտ էր արտաքին աշխարհէ հետ տնտեսական գործառնութեանը կատարելու տեսակետից: Այս նշանդական քաղաքականութիւնից բոլշևիկներին լեռ չապահանջին ոչ միայն իրենց ջատագոված ազգային ինքնորոշման սկզբունքը— սկզբունքները և՛ բեր են զապէջ դեր կատարել բոլշևիկների համար — այլև ան դաշնագիրները, որ նրանք կնքել էին ժամանորապէս Հայաստանի և Վրաստանի հետ: Այսքանը բաւական էր, որ զեռ

չբացած տոգուներ ու խամբեր այն Հմայքը, որ բոլշևիկները իրենց ազատագրական ճիշդիով մի ժամանակ ձեռք էին բերել միջազգային աշխատաւորութեան և անկախ կեանքի արշալոյսին ա՛րեւելե տոգովրդների մէջ:

Յետագայ դէպքերը ցույց տւին, որ սզգերի ինքնորոշման իրաւունքը խաթարոււմ և ոտնահարուում է բոլշևիկներին կողմից ոչ միայն անկախութեան պահանջի դէպքում, այլ և շատ աւելի թէթև խնդիրներում: Բաւական է, որ այս կամ այն ուղղութիւն պահանջը այս կամ այն նկատուածով բոլշևիկների հաշտութիւն չգտնուի, որպէսզի ոչ միայն այդ պահանջն անտեսուի, այլ և նրա հեղինակները հակաշրջափոխականներ յայտարարուին: Այս տեսակէտից բաւական հարուստ նիւթ է ճատակարարում ժամանակ հայկական իրականութիւնը:

Յայտնի է, թէ Հայաստանի նաճման օրերին բոլշևիկները որպիսի շուքիով Հրապարակեցին, թէ Հայաստանի և Արբէշանի վէճերն Հէնց միմիայն իշխանութիւնն իրենց ձեռքն առնելու փաստի շնորհիւ այլևս լուծւած են: Արբէշանի բոլշևիկները Բազուայ անթելի կայանից յայտարարեցին «ամենքին, ամենքին», թէ իրենց սահմանային վէճերը «Դաշնակցական Հայաստանի» Հետ են եղել միայն, և թէ այն վարկեանից, երբ Հայաստանում բոլշևիկեան իշխանութիւն է հաստատուած, իրենք նրան են վիճում բոլոր վիճելի հողամասերը: Արդիւնքը: Արդիւնքն եղաւ այն, որ երբ մի քանի ամիս անց վերջնական սահմանադժման աշխատանքին ձեռնարկեց՝ Հայաստանից դուրս մնացին ոչ միայն Եարուրն ու Նախիջեանը, այլ և Գանձակի լեռնային մասը, Ջանգեղուրի կէտը և Ղարաբաղը — այն Ղարաբաղը, որ յանձին իր Ազգային Խորհրդի բազմիցս որոշում է կայացրել միանալու Հայաստանին և այդ միացումը զուգու բերելու Համար մի քանի անգամ զէնք բարձրացրել Արբէշանի իշխանութիւնների դէմ... Եթէ Եարուրն ու Նախիջեանը Արբէշանին կցելը բոլշևիկներն արդարացնում են նրանով, որ Թիւրքիան Կարսի դաշնադրին կաթնած պնդում է այդ կցման վրայ. ապա ի՛նչ կարող են ասել նրանք լեռնային Գանձակի, Ղարաբաղի, և Ջանգեղուրի խնդրում իրենց հայտաւար վարմունքն արդարացնելու համար:

Միեւնոյն անարգ խաղը Հայ տոգովրդի ինքնորոշման իրաւունքների վերաբերմամբ. տեղի ունեցաւ և Հայ-վրացական սահմանագծման խնդրում, որ կարգադրեց ճիշդ և ճիշդ ցարական սատրապների կա-

մայականութեամբ: Առանց ժողովրդի կամքը հարցնելու՝ Վրաստանի իշխանութեան տակ դրեցին ոչ միայն Թիֆլիս գաւառի հարաւային և Լոռի գաւառի հիւսիսային մասերը, որոնց մէջ վրացիք չեն փոքրամասնութիւն են կազմում, այլ և ամբողջ Ախալքալակ գաւառը, որ գրեթէ միապաղպղ Հայ ազգաբնակչութիւն ունի:

Այս խաղի արձագանքն է Հանդիսանում Ախալքալակցիների վերջին ցույցը, որ իբրև «Հակադեպոփոսական ելույթ» յուզում է առաջ բերել Անդրկովկասի կառավարական շրջաններում, և որի վրայ անհրաժեշտ ենք համարում հրաւիրել մեր ընթերցողներին ուշադրութիւնը:

1923 թ. Նոյեմբերին Երեսնում կատարեց մի գաւեշտ, որի անունն էր «Նախկին Դաշնակցականների կոնֆերենցիա», իսկ նպատակը՝ Հ. Յ. Կոշնակցութեան կազմալուծումը կամ լիւնիդասիոնը: «Կոնֆերենցիա» աշխատանքների միջոցին «Նախկին դաշնակցական»ներից մէկը Հարց է տալիս Արտաքին Գործերի ժողովոմ Մուսեանին, թէ ինչու բոլշևիկները չեն կցում Հայաստանին Ախալքալակ գաւառը: Պ. Մուսեանի պատասխանը լինում է կարճ և հատու. «Ախալքալակցիք այդպիսի ցանկութիւն չեն յայտնել»:

Պէտք է ենթադրել ուրեմն, որ բոլշևիկներին և ժամանաւորապէս Հայ բոլշևիկների համար մինչև օրս ախալքալակցիների ցանկութիւնն է միայն պակասել՝ նրանց ճակատագիրը համաձայն ժողովրդի ինքնորոշման իրաւունքի կարգադրելու համար: Բայց ահա այդ ցանկութիւնը հրապարակ է գալիս: Հրապարակ է գալիս ամենաորոշ և ազդու եղանակով: Ախալքալակի դեպուտութիւնը զգուած, ինչպէս անցեալում նոյնպէս և ներկայումս, վրացական յուր վարչութիւնից, դուրս է տնում վրացի կոմիտարներին իր գաւառից և յատուկ պատգամաւորութեամբ դիմելով Անդրկովկասի և Հայաստանի «բանւորա-գիւղացիական» իշխանութիւններին՝ պահանջում, որ ուղղաւոր միացնեն Հայաստանին: Պատասխանը լինում է նոյնքան կարճ ու հատու, որքան և Պ. Մուսեանինը, թէպէտև փոքր ինչ տարբեր բովանդակութեամբ: Պատասխանն այն է, որ Հայ դեպուտատների ցանկութիւնից չէ կախուած Հայաստանի թէ Վրաստանի իշխանութեան տակ ժողովրդը, այլ այդ երկրներում բազմած բոլշևիկ իշխանաւորների հայեցողութիւնից...

Ահա թէ որպիսի սպասեռման է Հասել մեր օրերի բոլշևիկըը ազգերի ինքնորոշման խնդրում:

# ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

I

Սկսեց թարթարող յայտարարութեամբ, թէ ինքնորոշման իրաւունքն անկապտելի է անգամ այն դեպքում, երբ մի զիւր ցանկանում է անջատել պետութիւնից և իր Համար անկախ պետութիւն կազմել և վերջացնում է նրանով, որ մի ամբողջ գաւառի մերժում է իրաւունք տալ մինչև իսկ մի շրջանից դուրս գալու և միւսի մէջ մտնելու, թէև այդ երկու շրջանն էլ միեւնոյն ընդհանուր պետական միութեան մէջ են գտնուում...

Այս ապաստուածը դժբաղդբար միայն տեսական նշանակութիւն չունի մեզ Համար, այլ և խիստ զործական նշանակութիւն, որովհետև նա արգելք է Հանդիսանում Հայ ժողովրդի և Հայկական երկրամասերի ամբողջացման բնական ընթացքին: Այդ ամբողջացման կարեւորութիւնը պատկերացնելու Համար բաւական է յիշել, որ Վրաստանում և Արբելումում գտնուող Հայկական գաւառներն իրենց տարածութեամբ գրեթէ Հուասար են Խորհրդային Հայաստանին, իսկ նրանց մէջ ապրող Հայ ազգաբնակչութիւնը Հասնում է մօտ 400,000-ի: Անհրաժեշտ է այդ գաւառների միացումը, որպէսզի Հայ ժողովուրդն անդրկովկասեան ժողովուրդներէ ընտանիքում Հաւասարագոր անդամի դիրք ունենայ, անհրաժեշտ է նաև՝ որպէսզի Հայաստանը կարողանայ իր մէջ ամփոփել տարազիր Հայութեան գեթ այն մասը, որ աստանդական կեանքի արհաւիրքներին է մատնուած:

Մենք գիտենք, որ այս նկատումները ոչինչ չեն ստում Հայ բոլշեւիկի սրտին ու մտքին: Ինչ փոյթ, որ մեր Հայրենիքը ահակիրէն յօշուած է: Հայ բոլշեւիկը միացածով էլ գոհ է: Միացածն էլ ապահովում է նրա սպրուտը... Բայց Հայ ժողովուրդը, որ իր երկրի ամբողջացումն ու ազատութիւնը ձեռք բերելու Համար ոչ մի զրկանք, ոչ մի զոհողութիւն ծանր չէ Համարել՝ չպիտի Հաշուի այն վիճակի Հետ, որին դատապարտում է նրան բոլշեւիկը: Ախաբալակցիների ընդվզումը ազգային-քաղաքական գիտակցութեան Հասած աշխատաւորութեան առաջին քայլն է: Այդ քայլին պէտք է յաջողեն երկրորդը, երրորդը, եթէ անհրաժեշտ լինի Հարիւրերորդը, մինչև որ կոպիտ բռունցքի պաշտամունքը մարմնացնող բոլշեւիկեան իշխանութիւնը, որի Համար սկզբունքն ու իրաւունքն ոչինչ են, իսկ ուժը ամէն ինչ, զգայ—զգայ ոչ միայն Երեսնում այլ և Թիֆլիսում, Բաղուում և Մոսկուայում — որ ինքնորոշման իրաւունքի և մասնաւորապէս Հայաստանի ամբողջացման պահանջը այնպիսի սաւր Հանգամանք են առել Հայ ժողովրդի կեանքում, որ նրա արհամարհիլը անպատիժ չի կարող մնալ ոչ մի կառավարութեան Համար:

Քաղաքացիական կռիւների զարդրից է վեր խորհրդաշին երկրների վերաշինութեան գործը բոլշեւիկների Համար ռազմական նմուշի Հանգամանք է առել Առեւտրա-գիւտնագիտական ներկայացուցիչներն արտոսահմանում, ժողովրդական կոմիտեաները մայրաքաղաքներում, գործկոմիտեք գաւառներում, ապրտարներն ամէն տեղ — բոլորը, բոլորը «գաղութում» են վերաշինութեամբ: Սրա Համար շարունակ նորանոր աճակատներ» են կոչուում, բեկորային աշխատանքների սահմանում, ճրջակուցութիւնների բեմադրում են:

Եւ այս ամէնը կատարում է այնպիսի մի բեկամով այնպիսի ցուցանոյթեամբ, որ ամենամեղձ որակւածով անձաշակութիւն խօսքով միայն կարող է բնորոշուի:

Փորձի Համար գնացէք Իւզուրսիան, Երեկուեքանիներէ մի կոյս ներկայացնող այդ լեկիւր ոյսոր կորած է քարի, կրի և ստոյձի մէջ: Մեծ մասամբ արդէն վերաշինւած են մասամբ էլ վերաշինւած են բոլոր քանդւած կայտրանիները, կամուրջները, զործարանները, տները ևն: Գիւղատնտեսութիւնն ընդարձակուած է այն չափով, որ Հինգ տարի առաջ մի միլիարդ զինարի արժողութեամբ Հացահատիկ արտահանող Իւզուրսիան ներկայուս իր արտածութիւնը Հացայի է 12 միլիարդի: Արդեւագործութիւնը Հսկայական դարկ է ստացել, և քիչ քանք է Հարկուար, որպէսզի սերքն ու իրաւան այլևս կարիք չունենան արտաքին շուկաներին աչք անկելու: Մեցէք այդ երկրից Ռուսասիա, Յունաստան, Բուլղարիա — ամէն տեղ էլ կը տեսնէք տեղային աստիճանի Հասած վերաշինական աշխատանքներ՝ ըստ տեղանքի զոհացուցիչ արդիւնքով: Այնուհետեւ եկէք Փրանսիա, որի 1/3-ից աւելին — և այն էլ ամենաարդիւնագործական մասը — Հիմնահասակ կարծանւած էր մեծ մասամբ գերմանացիների, իսկ մի սրջ չափով նաև Փրանսիական և զաշնակից բոնակների կողմից: Այստեղ դուք կը լսէք, կ'իմանուք, որ աւերւած վայրերը վերաշինւած են 91%-ով, դեռ չենք խօսում այն մասին, որ ամէն ինչ վերականգնւած է շատ աւելի կատարելով ձեւով, քան կը տեսնէինք պատերազմի նախորդական նպն երեսոյթը կը նկատէք դուք և՛ Իտալիայում և՛ Քեչիկոյում, և՛ Լիւքսեմբուրգում, և՛ Չեխոսլովակիայում և՛ Հունգարիայում և՛ Պրուսիայում և առհասարակ այն բոլոր երկրներում, որոնք պատերազմի ժամանակ աւել կամ պակաս չափով աւերել են: Ամէն տեղ վերաշինական աշխատանք, ամէն տեղ տընտեսական կեանքի ուսճացում:

Այս երկրները ոչ մէկը «բանտարա-գիւղացիական» յորջարջելու յաւակութիւնը չունի: Նրանց մէջ իշխող կառավարութիւնները ուսուց բացառութեան բուրժուական են, իսկ մի քանիսը մինչև անգամ աւելի՛ լետազէմ քան սոյիբական բուրժուականը: Բայց նրանք ամէնքն էլ Հասկանում են, որ քանդած մասնապահէք, գործարանը, ստեղ պէտք է վերա-

շինել, որ զիւզանտեսութիւնն ու արդիւնագործութիւնը պէտք է բարձրացնել, առեւտրին զարկ ստոյ, և ա՛նկըն էլ աշխատուն են այդ ուղղութեամբ, աշխատուն են լուռ ու մռնչ, առանց աւելի ապօքալի ու հարս. հրոցի:

Սակայն խորհրդային երկրներում քարե բարի վրայ չէ գրում առանց Թմբկահարութեան: Վեցրեք պատահական ձեւով որ և է խորհրդային երկրի մի շարքում Թերթիլը և կ'արագեք վերաշինական աշխատանքներին վերաբերեալ յօդանիւնն ու Թղթակցութիւնները: Ինչէ՛ր ստես չէք՝ գտնի նրանց մէջ.— մի տեղ զիւզական տառն են վերականգնել, մի ուրիշ տեղ զպրոցի պատերը ձեփել, երրորդ տեղը փորոցի մայթերը շարի, չորրորդ տեղը խճուղին կարկատել — այս բոլորը ցուցաբերում կգտնէք նրանց մէջ, ցուցադրում էրբեւ տիրազորութիւններ, էրբեւ յաղթանակ բնութեան և ճորդկային ներհակ ուժերի դէմ... Եւ ո՛ր է թէ միայն սրանով տօհմանափակէք բոլշևիկիտան շինարարական անմարակութիւնը: Խորհրդային Թերթիլը, կատարում մի՞նչ ու փորք փորձերի չտի ե նրանցից էլ աւելի, ծագումն են մինչև իսկ լոկ մեծողում գործերով են այդպէս հրոցաբարձր. գործեր՝ որոնց անունը շարունակ հղովում է նրանց համբերատար էջերում, իսկ իրականացումը յետաձգում անարժ ժամանակով..

Ինչպէս աճէն բանում, նոյնպէս և վերաշինութեան խնդրում Հայաստանի խորհրդային իշխանութիւնը քալլ առ քալլ հետեւում է Ռուսաստանի, Ուկրաինայի և Վրաստանի օրինակին: Նրանց պէս ալ էլ է Թմբկահարում Հայաստանում կատարում կամ ծրագրում այս կարգի աճէն մի աշխատանք: Եւ ոչ միայն Թմբկահարում, այլ և պահանջում — անպատճառ. պահանջում — որ աճէն մի վերաշինական գործ խորհրդային բեժմիմի կամ իշխանութեանը վերագրել: Եթէ Հայաստանում կ'ով հարթ է մեկ կամ հարթը մեծանալով կ'ով դարձի, եթէ զիւզանք կէս զեմատիտի փոխարէն մի դիստոտին և ցանկ, եթէ այգեպանը աճհրածեշտ և նկատու իր այգին քարերից մարել կամ ընդարձակել, եթէ արհեստաւորը հարկ է համարել իր արհեստանոցը բանալ կամ գործիքներին թիւը շատացնել — այս բոլորն արդիւնք է խորհրդային իշխանութեան տաղանդի ու կորովի այս բոլորի համար հայ ժողովուրդը երախտապարտ պէտք է լինի այդ իշխանութեան: Որ հայ ժողովուրդն իր հոգաբարձեայ գրական ընթացքում աճէն մի քաչքայուճից յետոյ խոխն շուկեկ, ոտքի է կանգնել և իր սահմանագործական և շինարարական կարողութիւնները գործութեամբ վերականգնել քանզում օջաղը. վերտեղծել տեսնութիւնը — այս ոչինչ: Ոչինչ է նաև այն, որ այդ ժողովրդի հայաձական մնացորդները, հէնց մեր աչքի առաջ, այն բոլոր զգալութիւնում, ուր փորձիշատ է խազող աշխատանքի հնարարութիւն և տրւած նրանց, ոչ միայն դուրս են եկել ճուրայիլի վիճակից, այլև, առանց խորհրդային իշխանութեան օրհնութեան, տնտեսապէս ամրապնդում և շատ զէպրեում մինչև անգամ բարեկեցիկ կեանքի շրջանն են թեւակոխում՝ բոլոր հարեան ժողովրդների զարմանքը շարժելով: Բայց ի՛նչ ենք ստում.— մեր ժողովուրդը, անգամ տարաբնութեան սարսափելի օրերին, իր անզուսպ շինարարական բնազդից մղւած Միջազգային անպատանկն իսկ շէնացնելուն ձեռք է գարկել, հէնց որ նրան

իրաւունք են տել մի տեղ զոգար տակելու. ի միջի այլոց՝ այս էր որ այնքա՛ն կատարելիս էր Թիւրքերին և զրգոմ նրանց հաթազան իջնելուն: Դեր-Զորի մէջ կուտակւած հայ խլեակները զլինի:

Որ բուրքը այսօր անտես է առնում երկրի բոլշևիկներին և նրանց արտատահմանան փոչհոնքներին և ձեռնատուն. ներք կողմից, Անտես է առնում, որպէսզի հայիական իրականութեան գործ ֆանի վրայ ցայտուն կերպով երեւայ բոլշևիկի «շինարար ոգին» և խորհրդային վարելների «ժողովրդասիրութիւնը, հեւատանութիւնը, լծաստանութիւնը» և մնայած բարեմտնութիւնները:

II

Այս բոլորով հանդերձ Հայաստանի վերաշինութեան խնդիրը մնում է հրապարակի վրայ. մնում է էրբեւ մէկը մեր իրականութեան հրատապ խնդիրներից, եթէ չտանկը անհնարացրտապէր՝ Ուստի անբոճեշտ է, որ աճէն մի հայում սրտին ծօտ է անկարգ զոչերի գիտ ձեռք՝ քերւած այսօրայ Հայաստանը և նրա սպագոն, իր բաժնի մասնակցութիւնն ունեայ նրա վերաշինութեան և բարգաւաճման գործում: Այստեղ նախախրութիւններն ու տոնելութիւնները հանդէպ Հայաստանի այս կամ այն վարչաձեւի կամ կողուս վարական կողմի վեր չարիտի խաղան, որովհետեւ վերջին հաշւով սրանց բոլորն էլ ժամանակաւոր են, և փոփոխական էին: Ինչպէս, մեր յոյսերի սպակներ, մնում են մեր երկիրն ու ժողովուրդը, դրս համար էլ սրանց զորացումն ու բարգաւաճումը վեր պէտք է լինել բոլոր անհատական ու խմբակցական նկատումներէրց:

Սակայն որպէսզի աճէն մի հայ զիտակցորէն և նպատակայարձար ձեւով կարողանայ ծօտեալ այս գործին, անհրաժեշտ է, որ նախ և առաջ նրա համար պարզ լինի, թէ ի՛նչ պէտք է հասկանալ վերաշինական գործ անելով և ապա՝ այդ գործի մէջ որն է այն կէտը, որի շուրջը նա պէտք է առաջին հերթին խտացնի իր ջանքերը:

Այսօր վերաշինական գործի մէջ աճէն ենք ցուցաբերում է խառն իխուռը: Այս բանում մեզանքում են թէ կատարական օրգանները և թէ հանրային մի շարք կազմակերպութիւններ, որոնք պրոպագանդի նկատումներով, անհատական և հանրային անտեսագործութեան բոլոր արտայայտութիւնները իրար են խառնում, որպէսզի վերաշինական գործը մեծ համեմատութիւններով ներկայանայ Հանրութեան Միջազգայն աճէն տեսնելուց անհրաժեշտ է, հրամայանութիւն անհրաժեշտ, որ այդ գործը ճշտօրէն սահմանաբոլշևի

Երբ քաղաքացին սեփական ջանքերով մի նոր տուն է շինում կամ հին տունը նորագում, երբ զիւզացին առանց կողմնակի օգնութեան ընդարձակում է իր տնտեսութիւնը կամ բարեկունում — առ ընդհանրապէս առանձով վերաշինութիւն է ի հարկէ, որովհետեւ նման աշխատանքները վերջին հաշւով տանում են երկիրը դէպի բարեկարգութիւն, իսկ ժողովուրդը՝ բարեկեցութիւն: Բայց ի՛նչ արժէք ունի այս գործերը, որոնց բոլոր երկրներում կատարել են, կատարում են և պիտի կատարեն — ներկայացնել էրբեւ վերաշինական գործ: Մեր կարծիքով ոչ մի նրանց ցուցաբերութիւնը լուռ է, մինչև

իսկ անհրաժեշտ մեր երկրի և ժողովրդի անտեսական և կոյտուրական վիճակի ճառին գաղափար կազմելու կամ նրանց զարգացման անկրկնցիկը ճշտարաշեղու տեսակետից, բայց նրանք պէտք է դուրս հանուին վերաշինական գործի ցնուութեան շրջանակից, որովհետև աւելորդ սեղը բար- զացնում և հիմարում են լուծուիլը ինչպէրը:

Սրանով չենք ուզում ասել, թէ Հայ Հասարակութիւնն անտարբեր պէտք է մնայ դեպի ժողովրդական անտեսագոր- ծութիւնը: Բնաւ Հայ Հասարակութիւնը պէտք է ուշի ուշով հետեւի, որ այդ անտեսագործութիւնը դրևի այնպիսի պայմաններին ճէշ, որոնք անհրաժեշտ են նրա զարգացման համար: Այս տեսակետից նա պէտք է պահանջի, անդպար պահանջի, որ խորհրդային իշխանութիւնը ճիւղնուած ընդմիջա վերջ տայ «ազգայական կոմունիզմ» մնացորդներին, որոնք դեռ շարունակում են կաշկանդել երբեմն նա՛ն քայքայիչ դեր կատարել ժողովրդական անտեսութեան մէջ: Այսօր այդ իշխանութիւնը կաշիջող դուրս է գալիս Հայ և օտար կա- կայապետներին հրապարելու դեպի մեր երկիրը, թէև գիտէ, որ նրանք ինչպէս մուստամուտ, նոյնպէս և Հա- յաստանում կապիտալիստական սխտանին յասուկ Հաճագործ- մամբ պիտի քանեն մեր երկրի կենսական հիւթիւրը. բայց նա երկրի աշխատատարներին անտեսական զարգացման հա- մար հազար ու մի որդիքներ է յարուցում: Ինչպէս խոր- հրդային միւս երկրներում՝ նոյնպէս և Հայաստանում դեռ չէ վերացել այն ճառագիւծութիւնը, թէ մի գոյզ եղ աւելի ու- նեցող դեղագին, կամ փոքր ինչ տանիլն բնակարանում ապ- բող քաղաքացին պէտք է դասուեն կուլանիերի և տղրուկ ների շարքը: Այս ճառագիւծութեան խորտակումը ինչնին ճեմ զարկ կտայ երկրի վերաշինութեանը՝ անհատական նախա- ձեռնութեանը թողնելով մի շարք գործեր, որոնք այսօր հան- րային կազմակերպութիւնների հոգացողութեան առարկան են դարձնել:

Գալով բուն վերաշինական գործին՝ պէտք է տեսնը, որ վերաշինակ ուսհանափակումից յետոյ մէջ սեղը կման այն գործերը, որ խորհրդային իշխանութիւնը և այսպէս կըշում չէզոք ազգային կազմակերպութիւնները պէտք է կատարեն պետական կամ ճանապարհ միջոցներով մեր երկրի բարե- կարգութեան, ժողովրդի տեղաւորման և բարգաւաճման հա- մար: Սրանք, միայն արանք է, որ պէտք է հրապարակ հանուին իրբեւ վերաշինական աշխատանք և արակցից դո- տկով է, որ հայ ժողովուրդը պէտք է գաղափար կազմի իր կաւաւովրջները և հանրային կազմակերպութիւնների իմաս- տութեան և կարգութեան ճառիս:

Ար, այսպէս ճշտորոշում վերաշինական գործերը մեր կարծիքով պէտք է բաժանել երկու ճառի. բարձր, որ խոր- հրդային կաւաւարութիւնը պիտի կատարի կամ կատարել սայ պետական միջոցներով և գործեր, որանց մէջ հանրա- յին կազմակերպութիւնները պէտք է օգնութեան դան կաւա- վարութեանը կամ իրենք ստանձնեն նրանց կարգադրութիւնը:

Առաջին կարգին են պատկանում պիթէ այն բոլոր գործերը, որ այսօր կատարում են կամ օւզում են կատա- րել հօկերը, կարմիր-խաչերը, բարեգործականները և դասա- զան ճանապարհ նպատակներով աւազացած քնիկակալութիւն- ները: Այս բարձր են — ջրուցները բանալը, առուներ

կարգաւորել, ճահիւններ շորացնել, ճոնապարհները կարգի դնել, երկրիժողովրդական առաջադասութեան կարիքները բա- ւարարել, զարոցներ շինել, համարարակ պէշաքերը հոգալ են: Սրանց բոլոր պետական միջոցներով կարգադրելիք գործեր են, և կաւաւարութիւնն իր վրայ պէտք է վերցնի նրանց հոգացողութիւնը: Գիտենք, սեզամ կարգաւորում երկրների մէջ հասարակութիւնը նմանորինակ ձեռնարկները գեղըրուծ օգնութեան է գալիս կաւաւարութեանը՝ սակայն մեր իրա- կանութիւնը այնքան առանձնաշատուկ է և հայ Հասարա- կութեան ուրին այնքան ճեմ բոււ է ճանրացած, որ նա, ինչպէս ստորեւ կոտանենք, չի կարող իր սուղ միջոցները վերաշինալ իխտ արժեքաւոր գործերի համար տրամադրել՝ առանց թի- բունալու պատճախութեան իրեն վիճակում գիւրի մէջ:

Թող մեզ չտանն, թէ Հայաստանի խորհրդային կաւա- վարութիւնը միջոցներ չունի վերաշինալ գործերն իրականա- ցնելու համար: Գիտենք, որ նա հարուստ չէ՝ բայց այն հարե- կերը, որ նա է առանձն հայ աշխատատարի կենակից — հարե- կեր, որոնց նմանը մոկողական արշաւանբելի վեր չէ տեսլ Հայ ժողովուրդը — ըստ ամենայնի հնարաւորութիւն են ապիս նրան ընդաւառել վերաշինալ գործերի ճախերին աւանաջն այն չափով, ինչ չափով նա արկնակութիւն ունի հօկերից, և միւս հանրային կազմակերպութիւնները: Սրա համար անհրա- ժեշտ է միտն որ նա պետական միջոցները մի միտն ան- տական նպատակների համար գործադրի և այն էլ շուր կա- բելոյն խնայողաբար: Անցողակի յիշտուակենք մի քանի մի- ջոցներ, որ եթէ կիրաւուէին խորհրդային իշխանութեան կողմից՝ բաւական շօշափելի բաւանրներ կը գոյանային վե- րաշինական կարիքներին համար:

Սրանցից առաջինն այն է, որ կրճատութեան ճոցէին երկրի վարչական, դատաստանական և աւհասարակ կաւա- վարական մեքենայի մէջ: Մեր երկրի բոլոր անկիւններում ցանում գործկոմներն ու յարակից մարմինները իրենք բազ- մաթիւ պաշտօնութեանը շուսալութիւն են հայ ժողովրդի համար: Բաւական է պետական օրգանների կողմից մի խանութ բացել, որ պաշտօնեաների մի նոր բազմութիւն ցցել մէջ- տեղը, մինչդեռ երկու քայլէ վրայ ճառաւոր աւակալականը. յաճախ միայն մի գործակատարով շատ աւելի ճեմ աւակալու- կան գործաւուծութիւն է երեւան բերում: Քիշաճակութեան կրճատում ուրեմն անհրաժեշտ է ինայտղութեան համար: Կարող էինք սասի, որ առաջին հերթին պիտի կրճատի գաղտնի և յայտնի տակիանութեան կարծը, ճանաւանդ օր, ինչպէս հաւատացնում են բուշուիկները, Հայաստանում օրայ իշխանութեանը հակաաւորդ կուտակցութիւններ չկան, իսկ հայ ժողովուրդն էլ չնաշխարհիկ խանդաղատան- քով փարած է խորհրդային բեմիմին: Բայց գործնական մը- նալու համար մեք այս կէտի վրայ չենք պնդում, որով հետեւ մեւնուցն է, բուշուիկները այդպէս օր և է վերաւի- ճնե գնայ: Նրանք շուս են իրողիկ հակաաւորակ կաւաւ- ցութիւնների վիճակին և հայ ժողովրդի զգացմունքներին այսպիսի զիջողութիւն անելու համար...

Երկրորդ միջոցը կլինէք այն, որ խորհրդային իշխանու- թիւնը նապեցներ պետական բարձր պաշտօնեաների սանի- կները: Վերջինները թղթի վրայ բաւական համեմատ են նշա- նակում հասարակութեան աչքին փաշի ցանելու համար: Սա-

կայն բարձր պաշտօնեաներից շտաբը մի քանի աղբիւրից համեառ առիթներն ստանալով՝ յաճախ կայուն ըն այնպիսի անձանկները, որոնցից կը կործարէին անգամ ցարական պաշտօնեաները: Պէտք է վերջ տալ պետական ձեւերով կատարուող այս թալանին: Պէտք է կրճատել ճանապարհային պատերազմային արտառահանման գրեզող բաշտիկների օրտակահիները: Գտնելով նրանց շատը կենցաղից՝ այդ օրտակահիները ոչ մի ներգաշնակութեան մէջ չեն գտնուում «բանուորացի-գրեզողներն», այն էլ Հայաստանի «բանուորացի-գրեզողներն» ներկայացուցիչ Հակոբանուրի Հնա:

Վերջացնելու համար կը ճանաչուի ինքն ինքն ինչ կա զս Գոմանկիստական Գուաակցութեանը պետական գանձարու: Ենց սարսուղ նպատակ վերացումն է: Աշխարհիս երեսին զըտնուող բոլոր կուսակցութիւնները աղբում են իրենց սեղանների նրխական զոհուրութեամբ: Ինչու պէտք է այդ զոհութիւնից ապառ լինի կոմունիստը: Ինչու պէտք է այդ կուսակցութեան բնական ու կոմունիստները իրենց բազմաթիւ քարոս պահանջով և գրադրներով պարագլուխ պէս ծծեն Հայաստանի իրական գանձարանը: Ինչու պէտք է այդ գանձարանից հող պահին կոմունիստական թիւիկի և այլ հրատարակութիւնների ծախսերը: Որով լուսն եթէ սպառելու չլինի թիւիկները կը փակին և Կոմունիստ յօդու կցնդին: Բայց սա ինչ առարկութիւն է, եթէ ծննդ ուղղւած ենք յորձերն խօսել մեր ժողովրդի գրեզողով մեր երկիրը վերաշինելու մասին:

Մտնով Հայաստանի պետական միջոցների ինչպիսիքութեան ինչպիսիք չէ սպառում ի հարկէ: Բայց ոչոքունն էլ բաւական է Համարելու համար, որ եթէ խորհրդային Իշխանաւորներն անկեղծօրէն ցոյցանան՝ նրանք Հայաստանի պետական գանձարանից աչքան գրամ կարող են արժանապատիւ վերաշինական գործի համար, որի մասին երազել անգամ չեն կարող բոլոր հօիներն և մնացած կազմակերպութիւնները միասին առած:

III

Սակայն վերաշինութեան հարցը գործադրարար չէ սահմանափակում այն գործերով, որ մենք խորհրդային Իշխանութեան անմիջական Հողագործութեան ստարկան ենք համարում: Իրանցից գաւա կան ինչպիսիք, որոնց լուծուած վեր լինելով աչք իշխանութեան նրխական և ճանաչուող բարոյական սժիւրից՝ պահանջում է անքոջ ազգի խոսացած գործակցութիւնը Մեր խօսքը վերաբերում է այսպէս կուսած գաղթականական խնդիրներին:

Այսօր մեր բոլոր հայրենակիցների բերումում Հայաստանի վերաշինութեան պահանջն է հրովաւում Անգամ այն հասանքներն ու տարրերը, որնքց պետ երէկ — երբ մեր երկիրն աւելի ընդարձակ էր, և ժողովուրդը բարգաւաճելու, աւելի լուս պահանջները մէջ — չէին ուղղւած Հայաստան ահուց նրան յատկացին՝ մի առանձին խանդավառանքով են խօսում այսօրուայ յօշուած և բազմաթիւ կազմակերպութիւններով կաշիւակուած Հայաստանի մասին: Որքան էլ տխուր լինեն այս հոգեբանական բեկման պատճառները, մենք չենք կարող անքոջ որսով չուղանել այն Մենք ցանկանում ենք — և ցանկանում ենք առանց որ և է վերապահութեան — որ անէն մի հայ մարդ, ինչ աշխարհագրական գօտիի վրայ էլ

ապրելիս լինի նա՝ իր յայտնի հանգրաւանը դարձնի այսօրուայ Հայաստանը և գորգուրայ նրա վրայ այնպէս, ինչպէս գաւաակն է գորգուրան Հարապտ մօր վրայ:

Սակայն այդ գորգուրանքը, որ շատ դեպքերում, խօսքով գոնէ, յոփշտակութեան է համուն, չպէտք է ճուշտեցնել առջ մեզ, որ ներկայումս՝ Հայաստանի սահմաններից դուրս ապրում են մի քանի հարիւր հազար. Հայեր, որոնք ոչ միայն գրեզող գնելու սեղ չունեն, ոչ միայն երթուկայ են ֆիզիքական, բարոյական և ուղղալին ալլառեւանս՝ այլ և կանգնած են գանձարանի նմանութեանը վտանգի առաջ: Ահա՛ ձեզ Պոլսոյ գաղթականութիւնը: Հրաշքով է միայն, որ նա մինչև օրս դերձ է մնացել գանձարանի փշացումից: Բաւական է մի թեթիւ հրաման Անգորայից, որպէսզի օրուայ Իշխանութեան բացարձակ քնահանուրին երթուկայ այդ գաղթականները քշել գէպի Անտաղիայի խորքերը՝ այնտեղ իր վախճանը գանելու համար: Ահա՛ ձեզ Միւրեանի գաղթականութիւնը, որի գլխին, Գոմանկիստի գեղալից ի վեր, դեռ կարում է մնում արիւնաւաշտ հրդարների հաթուղանը: Ահա՛ ձեզ Յունաստանի գաղթականութիւնը, որ ստեղծ մնացած հօտի պէս հարկւներով, հազարներով քշուած է երկրի մի ծայրից միւր՝ ճառնելով անապահօղ, աստանական կտանքի արհարկներին ու փշացումներին: Վերջուպէս ահա՛ ձեզ Բուլղարիայի, Եգիպտոսի, Սերուպի և ընդհանրապէս աշխարհէս բոլոր անկիւններում ցրւած հայ գաղթականները, որոնք, իրատարակ պարիսերի պէս, դատապարտւած են անհիւրընկալ միջավայրի բոլոր շահագործութիւնն ու կեղեքութիւններին հանդուրժելու: Ո՞վ պէտք է մտածի, հոգացողութիւն ունենայ այս բազմահազար տարագիրների մասին: Օտարները Մենք նրանց «բարացուածներն» գաւը պատգուները շատ ենք ճաշակել՝ որ և է նոր յայտն անձնատուր լինելու համար: Հայաստանի խորհրդային Իշխանութիւնը՝ նա շատ է կրնում «Համաշխարհային Յի գաղթականութեան» հոգեբով և յարակից գործերով՝ հայ գաղթականութեան հարցերով զբաղելու համար: Այդ Իշխանութեան հետ կապւած յայտերի արժեքը ճշտելու համար՝ բաւական է միայն վերաշինել, թէ հայ հասարակութեան կողմից ի՞նչ ահալին ճքնուած պիտի գործարարէր, որպէսզի նա, հինգ տարուայ ընթացում, 4—5 հազար հայ գաղթականները տեղ տար Հայաստանում: Արեւիկ մ՞ի է մնում ձեռնաղլը: Մէջտեղ մնում է ինքը հայ ժողովուրդը իր հասարակական կազմակերպութիւններով — իր բոլոր հօիներով, հօտներով, բարեգործականներով, կարծիք խաշիւով, հայրենակցական միութիւններով և այն բոլոր նոր ընկերակցութիւններով, որ դեռ կարելի է ստեղծել առաջիկային: Այս բոլոր մարմինները իրենց կիս նպատակը պէտք է դարձնեն հայ գաղթականութիւնը, կամ գոնէ նրա աննպատակաւ հաստանելու դուրս բերել ներկայ ու հարապ իրձակից: Այս անպարէզում նրանց անկապուած կարող են շօշափել գործը տեսնել: Հարկուած է միայն, որ համարեն, ներգաշնակեն և որոշ սպիները մէջ գնեն իրենց շահերը:

Այս ուղիները, ընդհանուր գծով երկուսի են բաժանուած: Առաջինը ի նրխակալներ հայ գաղթականներին Հայաստանում տեղաբերելն է: Փոխադրել գաղթականներին երկիր առաջին ամիսներին հոգալ նրանց ապրուստը, աւերած գիւ-

դերը կամ վայրերը բնակիչի դարձնել նրանց օրամադրելու համար, աշխատանքի միջոցներ հայթաթել կալով—ահա այս գործի զլլատար փուլերը Մի գործ է ա, որի անոնս առնելը մեր հասարակական կազմակերպութիւնները չեն կարող արդարացնել ոչ մի այլ վերաշինական նկատմաներով Եւ իրօք, ինչպէ՛ս կարող են նրանք արգարացնել հազարաւոր հայ ճարգիկանց աշխատեման և մինչև իսկ Ֆիլիլքական փշտոյնն հանդէպ իրենց ունեցած կամ ունենալիք անտարբերութիւնն այն ժամանակ, կրք Երեւանի բնակիչները համար կոնք շինելու կամ համալսարանի համար լարարատօտներ անդակերպելու կարիքը չէ վերպա՛ծ նրանց աչքից... Պէտք է աւելցնենք նաև, որ այս գործը՝ անմիջապէս մեր գաղթականները փրկութեանը ծառայելով հանդիւր՛ձ միեւնոյն ժամանակ գերազանցօրէն վերաշինական և Այլ սրտիւմ չի կարող ունենալ մի գործ, որ իր նպատակին հասնելու համար պէտք է անմտորոշակի վայրերը բնակիչի դարձնել և օտարի մայրերը շտիր հայ աշխատակարարին իր հայրենիքի անդձագարծական աշխատանքին լծի նա տարբերւած է հասարակական կազմակերպութիւնների կազմից ներկայուածս կատարող կամ ծրագրող վերաշինական աշխատանքներից այն բանով միայն, որ փոխտանակ ողբատելու օրւայ իշխանաւորներին իրենց վերաշինական պարտականութիւններից՝ լրացնուած կամ յաւելալ գարի է տալիս մեր երկրի է ժողովրդի բարգաւաձման գործին:

Երկրորդ ուղին գաղթավայրերում կատարվող աշխատանքների շուրջն է գտնուում Հայ գաղթականներին մեր միջոցներով Հայաստան փոխադրելու խնդիրը երկար ժամանակի պէտք ունի, իսկ մինչ այդ նրանց բազմապիսի կարիքները բարարուած են պահանջում: Մի սեղ անհրաձեշտ է աղետահար բազմութիւններին անմիջական օգնութիւն հասցնել (Սիւրիա) մի՛ ուրիշ. վարձուած պէտք է անգահանուած ժողովրդի անգարուածն մեզին մասնիկ (Յունաստան) կրորդ գաղթավայրում, փոփոցի ձեւէ մնացած որբերին պէտք է հուաքել ևն: Էլ չէնք խօսուած անողջպարհական, զգրոցական և այլ այս կարգի խնդիրները մասին, որոնք լուծուած են պահանջում անխախտ բոլոր գաղթավայրերում: Այս խնդիրները կարեւորութիւնը շեշտուած է միզ համար մասնաւոր, երբ նկատի ենք առնուած, որ լրատարնի պէտքում իսկ կարելի չպիտի լինի դատարիկը գաղթավայրերը հայրենի նրանց բոլորին Հայաստան փոխադրելով: Իրզ, այս բազմապիսի հրատար և քնթացիկ կորիքները մտաին ո՛վ պէտք է խորհրդի Հայաստանի ժողովուրդը դուրսը դնելու տեղ ունի. ունի և մի կաւալարութիւն, որ ստի կամ պիտիս չախով ընդաւառացուած է կամ պիտի հարկադրուի ընդաւառելու նմանօրինակ պահանջներին: Իսկ գրադարձութեան ժողովուրդը, որ ոչ պիտիք դնելու ապահով անկիւն ունի և ոչ էլ աէր և ու ախկան, նա՛ ու՛մ պիտի պի՛մէ: Հարցի պատասխանը ըստ ինքեան հասկանալի կլինէր, եթէ Հայաստանի խորհրդային իշխանութիւնը հայ ժողովրդի մտից և ոսկրից կերուած լինէր և այլ ժողովրդի ողբերգութիւնը սպիւր իր հոգու մէջ: Բայց քանի որ այլ այլպէս չէ, ապա ուրեմն այստեղ ևս օգնութեան ձեռք մեկնողները պէտք է լինին միւր համարային կազմակերպութիւնները: Վերջիններս այսօր էլ այստեղ ևս այնտեղ հասցնուած են իրենց օգնութիւնը.— Ամե-

րիկահայ հայրենակցական միութիւնները Սիւրիայում և ուրիշ տեղեր պահպանում են կարօտ հայրենակիցներին, Ամերիկայի Հ. Կարմիր Խուչը Յունաստանում արհեստանոց է բացել գործարդներին աշխատանք տալու համար, բարեգործական ընկերութիւնները զգալի գործ են կատարում որբերի ու հիւանդների խնամատարութեան ասպարէզում ևն: Սակայն այս բոլոր գործերը կատարուած են առանց ընդհանուր ծրագրի և պատահական ձեւով: Անհրաձեշտ է կենտրոնացնել վերոյիշեալ ձարմինները ջանքերը և բաշխել նրանց միջոցներն այնպէս, որ գաղթականութեան հրատար կարիքներն անտես չառնեն, իսկ համեմատաբար երկրորդական պահանջներն աւաջ քաշուեն: Բայց այս կարող է տեղի ունենալ այն ժամանակ միայն, կրք մեր հասարակական կազմակերպութիւնները ղետակցելով, որ ամէն կարգի թշտութեան մտառուած հայ գաղթականութիւնը իրենցից դուրս այլ աղաւթ չունի՝ յատուկ հրազարգութեան աւարկայ կազմակերպելու նրա ցուտի ստորոքը:

Այսպիսով վերաշինական խնդրում մեր տեսակէտները խառնուած են հետևեալ թիւրիք մէջ:

ա. Վերաշինութիւն ստեղծ պէտք է հասկանալ այն բոլոր աւսասանները, որ ոչտուական և հասարակական մարմինները կատարում են կամ պիտի կատարեն՝ Հայաստանը վերաշինելու և հայ ժողովուրդը ոտքի կանգնեցնելու համար:

բ. Մեր իրականութեան համայնական պահանջով այս աշխատանքները պէտք է բաժանուին Հայաստանի խորհրդային իշխանութեան և հայ-հասարակական կազմակերպութիւնների միջև:

գ. Խորհրդային իշխանութիւնն իր փրց պէտք է վերցնի պիտական միջոցներով վերաշինել երկրը և բուարարել նրա վրայ տարրը ժողովրդի անտեսական և կուլտուրական պահանջները:

դ. Հանրային կազմակերպութիւնները իրենց վրայ են առնուած հանրային միջոցներով:

1. Փոխադրել հայ գաղթականներին Հայաստան և նրանց տեղաւարման համար անմիջապէս անհրաձեշտ վերաշինական աշխատանքը կատարել երկրում:

2. Հազար օտար երկրներում մնացած հայ գաղթականութեան ներթական, կուլտուրական և ողբային կարիքները:

Սխեմատիկ ձեւով դրած այս թեզերը չեն ժխտուած անշուշտ հանուրին կազմակերպութիւնները և խորհրդային իշխանութեան գործակալութիւնը կամ փոխադարձ օգնութիւնը զանազան խնդիրներում: Սակայն նրանք յատկաօրէն սահմանափակուած են այն նպատակները, որոնցով պէտք է զկատարուեն մեր հասարակական կազմակերպութիւնները ամէն մի գործակալութեան զկարգում, որպէսզի խորհրդային իշխանութիւնը չկարողանա՛լ իր պարտականութեան ընդ բարձելով նրա օսական՝ արգելիք հան իրանալ մեր գաղթականութեան կարիքներին ծառայելու գործին, որ ցերեպ այսպիսովնուած անուսաղն նոյնքան կարեւոր մի գործ է հայ ժողովրդի համար, որքան ևս երկրի վերաշինութիւնը:

Քրտենց, որ բաշխելիկան անբախտարուելիւնը չպիտի

յազգադի մեր մտքերը ներկայացնել հայ աշխատաւորութեանը այն իմաստով, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը չկամութեամբ է վերադարձում երկրի վերաշինական աշխատանքներին Սահայն հոտի՝ հայ աշխատաւորութեան շարժում է ծանօթ բողջակիկների շրթերտներին՝ նրանց մերկութեանը կարեւորութիւն ընծայելու համար և ապա՝ նա իր առաջը դրած պրոբլեմանքը շատ լաւ է ընթացում հայ ժողովրդի կենդանի մարմնից բռնութեամբ դուրս բերած գաղթականութեան արժեքը, որպէսզի նրան երկիր փոխադրելու կամ նրա ցուրտը դարձնելու ներկայիս գործը քաջատրի իրեն չկ'ստնութիւն երկրի վերաշինութեանը աշտկցելու հարցում:

Դաշնակցութիւնը չէ կարող հակառակ լինել երկրի վերաշինութեանը ոչ միայն այն պատճառով, որ իր գերմարդկային մրցակցի և անկող դահլիճներով ստեղծուած նախասահը այսօր էլ մնում է նրա յայտնի միակ ապակէն, այլ և այն պատճառով, որ Հայաստանի վերաշինութիւնը նրան ներկայանում է իբրև աննահասատաուն երաշխիքներից մէկը բոլջակիկանք ընթացող ստանձարիւր համար: Բողջակիկը կարող է ստանձարձոկօրէն իշխել միայն այնպիսի, ուր աղքատութիւնը, թշուառութիւնը և անօթութիւնը անասնական միջակի հասցնելով ժողովրդական զանգաճներին՝ թող չեն տարև, որ նրանք իրենց աւորտայն ան հայր Թարիւղը գտնու ալլ բունի մտայն մտածման չէնց որ մի տեղ ժողովուրդը օրտայ ապրուտի որսամաշ Հոգիւրից ապտուելով սկսած է մտածել իր մարդկային իրաւունքների և մարդկային արժանապատուութեան մտայն՝ բողջակիկը իրայն ներք է քաշում իր ձանկիրը և ծածկում յանկիրքը: Ռոտ զիւղացիութեան և բողջակիկի անցնելու և ներկայ փոխարարութեանները կասկած չեն թողնում այս մտայն: Գտնուած չէ կարող լինել նաև, որ երբ մեր երկիրը վերաշինուի և անասնապէս տարապիտի՝ ըստ ինքնու անհատիկ կրտսնան այն ստանձարձակութեաններն ու բռնութիւնները, որոնց հանդուրժում է հայ ժողովուրդը իր կարիքի և աղքատութեան օրերին:

Եթէ բողջակիկները չեն հաւատում մեր բարեցակամութեանը դէպի Հայաստանը՝ հօ՞ Կ հաւատում են մեր անբարեցակամութեան դէպի իրենց հաստատած բռնապետական ընթացիկը: Այսքանն էլ բաւական է որ նրանք իրենց հոգու խորքում ալլ համոզուենք ընկնան մեր վերաշինութեան մարտնչութեանը քոտ այն, ինչ որ ամեն անբարեպետութեամբ ներկայացնում են և պիտի ներկայացնեն իրենց մամուլի և ժողովների մէջ՝ հանրային կարիքը մարտնչելու համար:

Ա ՋՈՐԱԿԱՆ

ԲԱՅՈՒՆԵ Է

«ԳՐՕՇԱԿ» 1926 ԹՈՒԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՊԱՅԻՐԸ

Բացառիկ երկիր մըն է այս լեռնաշխարհը: Եթէ Կիլիկիոյ բարձունքներէն մտունը առաւ Ռուբինեան հարաւորութիւնը, այս գաւառը հիմք դրաւ Միւսնեաց հզօրութեանը: Եթէ Սասունի ժայռերէն կը պարզէր հայկական ազատամարտի դրօշը, այստեղ Հայաստանի անկախութիւնն էր, որ կուսանէր դառն ճիգերով: Համառօտ ակնարկ մը Չանգեզիբլիցներու անցնելու և ներկայ ազրուամերու վրայ, մեզ կը բերէ սա եզրակացութեան, թէ՛յանձին Չանգեզիբլի Հայաստանի ողբալուստի վրայ հայկական Գարատաղ մը (Չերնոկորթա) կը բարձրանայ...:

Ես միտք չունիմ այդ քաջարի երկրին պատմութիւնը տալու եւ անոր զովքը հիւանդու վերջին տարիներու զանգեզուրեան հերոսամարտն այնքան վառ է յիշողութեանց մէջ, որ աւելորդ է պատմելու: Ընենք միայն, որ այդ լեռնաշխարհը շարունակ կոխներու, պայքարների մէջ է եղած Պարսիկին, թուրքին, թաթարին եւ Ռուսին հետ, երբեմն յալող, երբեմն անյալող, բայց ամէն պարագայի մէջ միշտ պահելով յամառ գիծ մը, իր շահերուն պարզ զիտակցութիւնը, իր իրաւունքներուն յարատեւ հետապնդումը եւ յանուն հայրենիքի զոհաբերելու պատրաստակամութեամբ:

Թէ ինչ իրաւունքներու պաշտպանութեան խնդիրներ են, որ մղած են Չանգեզուրցիին զէնք բարձրացնելու եւ երկար տարիներ պատերազմիլ իրմէ հզօր ուժերու դէմ՝ կը թողունք պատմաբաններուն: Յիշենք միայն, թէ ստանց լուրջ պատճառներու չէր, որ ան արիւնահեղ կոխներ կը մղէր: Անոր պայքարներն արդիւնք չէին այս կամ այն անձի կամքի, այս կամ այն կուսակցութեան թիւարարներուն, այլ հետեւանքը այն անբնական կացութեան, որու մէջ դրուած էր այդ լեռնաշխարհը:

Երբ լեռնական ժողովուրդը կը տեսնէ, ընդհանրապէս այն գաղափարը կը ծագի, թէ այդ ժողովուրդը ընդհանրաբար պիտի ըլլայ պատերազմիկ, յամառ, աշխատող, խնայող, զորմական և միաժամանակ բիրտ ու անուս: Միւսնեաց ժողովուրդին եթէ կը յարձարին առաջին որակումները, երբեք չեն համապատասխանի վերջին երկրքը: Հայաստանի քիչ անկիւններուն մէջ ուսումն է կը թիւթիւնը այնքան յարգի են, որքան Չանգեզուրի մէջ: Կան շրջաններ, ինչպէս Մեղրին, ուր դեռ քանի մը տասնեակ տարիներ առաջ անուս մարդ չէր գտնուել: Այնպէս որ եթէ Չանգեզուրը իր մարտական ոգիով նմանցնենք Չերնոկորթային, իր կրթական եւ մտաւոր մղումներով պէտք է նմանցենք Չուիցերիային:

Այս համառօտ ծանօթութիւնները տալով՝ կ'ուզէի սահմանափակել այն դերը որ չափազանցուած կերպով կը տրուի անհասներու կամ կուսակցութեանց: Ինչպէս և հերքել այն սխալ կարծիքը, թէ Չանգեզուրցիին ոչ թէ իր շահերուն զիտակցութեամբ, այլ տարերային կերպով և թիրամացաբար ինկած է պատերազմներու մէջ:

Արդ, վերջում են դժգոհութեան պատճառները, իրազորման են Չանգեզուրցիներու տնայնորդը, Անաբուն խնդիրը:

Բոլշևիկները իրենց սովորական բանաձևերով, շարունակ կը յայտարարեն, թէ ասն որ չկարողացան լուծել՝ ըտրոժոնական եւ մանր ըտրոժոնական՝ տարրերը իրենց արհեստանոց կոնկրետով՝ սովետական իշխանութիւնը լուծեց «նայրուածային կարգով», եղբայրութեան եւ հասարակութեան սկզբունքներով: Եթէ իրականութեան համապատասխան ըլլային այդ հաւատարմութիւնը, պէտք էր ուրբայանալ, որովհետեւ վերջացան այդ ժողովուրդը իր նպատակին հասած պիտի ըլլաք եւ սերմն վերջ պիտի դտած ըլլային այն պայքարներն ու արհեստանոցիներն որ կը տեսնեն մինչև այսօր, Իժմախտաբար ոչինչ կ'ըսեն այդ «ֆորմիւլ»ները, եւ, մանաւանդ գործունակ Զանգեզուրի համար, գատարկ խօսքեր են նման յայտարարութիւնները: Ան կը շարունակէ իր մորթին վրայ զգալ այն քաւն ու տանջանք որ մինչև այսօր զինքը մզած են շարժումներ կազմակերպելու, վերաբուժական միջոցներու դիմելու, գոտարու եւ բողբոջելու:

Ի՞նչ են եղած Զանգեզուրցիներու ըմբոստեցութեան շարժանքները:—

1. Իր անսնն թշուառութիւնը, որ հետեւեալք է հոյանդիկութեան, իէկերու օւ խօսերու շահագործման եւ անարատանքի կաշկանգման:

2. Իր գնդին եւ զաւառին աղքատութիւնը, որ հետեւեալք է հայրտուգեանք մահաժամարի բաշխման եկուր թանձր եւ ուս տարբերու միջև, իրողութիւն մը: Որ կը հարկադրէ իրեն կեկուրի անտարի եւ ժայռի խոնդներուն մէջ, իսկ արտասանդիները եւ արկատանք հնչիր ձգել տրիպակտող թմաթարին, Բուհիւն:

3. Մն կը հնչանտիլ իր հայրենիքի մէջ իրեն իրականացնելու տարր մը: Կայտանգ մը եկարծերու:

4. Ան հաշիւ հ'ընէ, թէ հայ ժողովուրդը եւ Հայաստանէն չզրկուելու համար անհրաժեշտ է որ իր թիկունքը կազմող նախնական զաւառը լեռնակարաւեի ուրիշի հողմէ, որովհետեւ այդ զաւառին միջոցով է որ ինքը կ'ընայ կազմուր Մայր Հայրենիքին հետ եւ քաճի որ նախնական մէջ կենսական շահեր եւ ունեւ, այդ զաւառին անըտտուր ժողովուրդը հարաւած մը կը նկատէ իրեն համար:

5. Զանգեզուրցիները հայաստանը Մայր Հայրենիքն է, իսկ Ղարաբաղը կը նկատուի իր բուն Հայրենիքը՝ Բաթմիւր Ղարաբաղը իրմէ եւ Հայաստանից կը նկատուէ քաճեղ երբայրը եղբորս: Գնաւարներով եւ անեղծուրի ձգել զինքը, ինչ որ նմանաբայլ է իր ոչնչացման Բաթմիւր իրմէ Ղարաբաղը եւ կամ հարկուած հասցեի սնորհ կը նշանակէ գըշուր իր ոչնչացումը եւ իրեն զնակ մը ձգել թշուարի մաշու:

Կան տեղական եւ երկիրորդական պատճառներ ալ, բայց զինտարներն աստիք են Այր պատճառները այնքան կենսական են անոր համար, որ ասն են մղելով անպիտան Թմառներու չմիանարութեան խորհուրդները, անհաւասար կողմերու մէջ մտաւ: Արդպէս՝ անի թուրք եւ ուն բանակներուն դէմ, եւ եթէ ոչ լաղժող, զոնէ կասեցնողը՝ եղաւ մեծ շարժանքներու:

Արդ, ներկայիս վերջում են այդ պատճառները: Իսկ կարծիքով՝ ոչ: Եւ ոչ-հանուր Միւսնայ լեռները իրենց անդունդներով հորէն պիտի ժայթքեն եւ զոն նստուածով պիտի փրթորկեն Որտան Բարդուշատի հովիտները:

Առնենք վերոյիշեալ հիմնական պատճառներէն երկուքը: Առնք եթէ մասամբ մեղմացած են ձեւականորէն, բայց ըստ էութեան ոչինչ փոխուած է. նախկին թշուառութիւնը, արտագաղթը եւ անարգարութիւնը կը շարունակուին սաստիկութեամբ: Այս մասին որոշ զազաւար կազմելու համար, ներկայացնենք Զանգեզուրի աշխարհագրական դիրքը, հողերու զաստարումը եւ արդիւնաբերելու կարողութիւնը, յարակից խնդիրներով:

Զանգեզուրը կը գտնուի Որտան եւ Բարդուշատ գետերու միջև, որոնք սկիզբ առնելով ձիւնայատ լեռներէ՝ իրար կը խառնուին եւ թափին Արաքսի մէջ: Այս գետերու հովիտը շրջապատուած է արեւելքէն, հիւսիսէն եւ արեւմուտքէն փոքր կողմաքի, Ղարաբաղի, Բարդուշատի եւ Նախիչևանի լեռներով, իսկ հարաւէն՝ Արաքսով. հանդիպակաց ակին կը բարձրանան Ղարաբաղի լեռները: Ուրեմն Զանգեզուրը կը ներկայացնէ քառակուսի մեծ սնտուկ մը, եզերուած անանցանելի, ձիւնայատ զազաթիկերով եւ յորդանոս Արաքսով, իսկ մէջէն՝ երկու մեծ գետեր բազմաթիւ ճիւղերով, որոնք օսնին ամենի անդունդներ, խոր ձորեր ու լեռնաշղթաներ: Այդ մեծ սնտուկը Բարդուշատի եւ Արաքսի խառնարաններու դիմացը, դէպի Փայտակարան կտրուած է եւ հարթավայրով մը կը միանայ Ջիրբայիլ գետաօր հարթութեանց հետ, իսկ միւս կողմերը փակ են եւ լեռնանցքերով. կամաներով կը կապուին շրջապատող Դիզակ, Վարանդա, Շուշի, Ջիվանիք, Դարապաղեալ, Նախիչևան եւ Քայազիտ գետաւտներու հետ: Այսպիսով Զանգեզուրը իր գետերու հոսանքներով, լեռներով աշխարհագրական ամբողջութիւն մը կը ներկայացնէ. Արաքսի հովիտին յետեւ՝ ան ամուր բերք մըն է, որ իր մարմնով կը պարտպանէ Հայաստանը արեւելքէն սուրբող խորշակներէն եւ արշաւանքներէն: Ան Հայաստանի արեւելեան բանալին է:

Միւսնայ երկրի այս յատկութիւններուն պատճառով, դեռ ինչ ժամանակներէ մինչև 1920 թուականը ան նկատուած է ամբողջական նահանգ մը կամ գաւառ մը՝ երբեմն սանձաններու մասնակի փոփոխումներով: Բայց ընդհանրապէս Զանգեզուր գաւառին բոլոր տիրողները խոնարհելով ընտիկեան սանձանաւորումներուն առջև, անխախտ պահած են գաւառին ամբողջականութիւնը: Առնենք վերջին վարչական բաժանումը, որ կը համապատասխանէ, մտաւարապէս նկարագրուած սնտուկի սանձաններուն: Ըստ Գովկասեան Տարեգրքի, Զանգեզուր գաւառը կը բռնէ 6936 քառ. վերստ (7893 քառ. քիլոմետր) կամ 722,517 տեխարտին որ բաժնուած է չորս գաւառակի, հետեւեալ տարածութիւններով.

1՝ Ղարաբաղի	1825 ք. վերստ.	= 196,161 տեխ.
Ո՛ Դեղ	« 2197 «	« = 228,952
III Արձուականի	« 4065 «	« « = 419,396
IV Ղարաբաղ	« 4847 «	« « = 492,498

Եթէ Զանգեզուրը աշխարհագրական ամբողջութիւն մը ներկայացնէ իր լեռներու սահմանադրումով, դետերու հասանքով, հաղորդակցութեան միջոցներով եւ ռազմական կարեւորութիւնով, նոյն ամբողջութիւնը չի ներկայացնէր կլիմայի, հողի եւ բնակչութեան տեսակէտներով: Անա այդ գաւառին ընդհանուր պատկերը վերջին տեսակէտներով.

Պատուակ	Տարածութիւն քառ. վերջու	Մեծամաս.		Փոքրամաս նու. վիւն		Արտաստի.		Հասցահատկի		Մուտա.		Լեռներ սահահարթ		Գաւառի	
		Հայ	Հայ	Քիւրդ	Հայ	Հայ	%	Հայ	Քիւրդ	Հայ	Քիւրդ	Հայ	Քիւրդ	Հայ	Քիւրդ
I Գարաբաղիւն	1825	Հայ	Հայ	Քիւրդ	Հայ	Քիւրդ	60-65 %	Հայ	Քիւրդ	Հայ <td>Քիւրդ</td> <td>Քիւրդ</td> <td>Հայ <td>Քիւրդ</td> </td>	Քիւրդ	Քիւրդ	Հայ <td>Քիւրդ</td>	Քիւրդ	
II Դեշ	2197	Հայ	Հայ	Քիւրդ	Հայ	Քիւրդ	40-50 %	Հայ	Քիւրդ	Հայ <td>Քիւրդ</td> <td>Քիւրդ</td> <td>Հայ <td>Քիւրդ</td> </td>	Քիւրդ	Քիւրդ	Հայ <td>Քիւրդ</td>	Քիւրդ	
I Ունձեւորիկ	1065	Հայ	Հայ	Քիւրդ	Հայ	Քիւրդ	91%	Հայ	Քիւրդ	Հայ <td>Քիւրդ</td> <td>Քիւրդ</td> <td>Հայ <td>Քիւրդ</td> </td>	Քիւրդ	Քիւրդ	Հայ <td>Քիւրդ</td>	Քիւրդ	
IV Գարաբ	1847	Հայ	Հայ	Քիւրդ	Հայ	Քիւրդ	35-45 %	Հայ	Քիւրդ	Հայ <td>Քիւրդ</td> <td>Քիւրդ</td> <td>Հայ <td>Քիւրդ</td> </td>	Քիւրդ	Քիւրդ	Հայ <td>Քիւրդ</td>	Քիւրդ	

Այս տախտակը կը ցուցնէ որ Զանգեզուրը ամէն երկրագործական գօտիի հարստութիւն կը պարտանակէ. թուղէն, բամպակէն, լիմոնէն սկսեալ մինչև Ալպեան գօտիի բերքերը կրնան աճիլ հոն: Այս գաւառն ունի դաշտ, լեռնադաշտ, լեռ, ձիւնապատ շրջ

ձաններ եւ անտառներ: Ան չունի միայն անապատներ: Զանգեզուրի մէջ ընկող ժողովուրդներէն երեքը իրենց թիւերով ալքի կը դարնեն. ասոնք են հայ, թաթար, քիւրդ ժողովուրդները: Այդ երեքէն Հայը եւ Քիւրդը ծուարած են արտատեղիներու, անտառներու, լեռնադաշտերու եւ ձորերու մէջ: Իսկ թաթարները բնած են տաք գօտիները, դաշտավայրերը եւ հարուստ տեղերը, փոքրիկ խումբերով միայն մտնելով լեռնադաշտերը եւ ձորերը:

Անձանօթ մէկը պիտի բացականչէր — Ի՞նչ հարուստ երկիր է Զանգեզուրը, բնութիւնը չէ խնայած ոչ մէկ բարիք, իմաստօրէն դաստարած է ժողովուրդները, համաձայն իրենց մասնազբտութեան եւ ընդունակութեան: Լեռնական Հայը եւ Քիւրդը հեռու է պահեց տաք տեղերէն, տարեր է լեռները որ հոն ոչխար եւ զուար պահեն, բուրբ, իւր եւ պանիր պատրաստեն, անտառներու փայտերը կտրեն, ցուրտ լեռներու մէջ գարի, ցորեն հասցնեն, լեռներու պտուղները ժողովն եւ եթէ ուզեն՝ ձմեռուան ցուրտերուն իջնեն Արծեանիկի գաւառակը, ուր կրնան արածել իրենց զուարը եւ փոխանակել բուրբը ապրշուսի հետ, զուարն ու կաշին բամպակի հետ, լեռան պտուղները թուզի ու նուշի հետ եւ այլն: Փոխադարձաբար՝ տաք երկրի գաւակ թաթարը Արաքսի հովիտին մէջ տաք երկիրներու յատուկ բոյսերը հասցնելով՝ կրնար ամառուայ տաքին բարձրանալ Հայերու մօտ, թէ զովանալու եւ թէ իր ապրանքը փոխանակելու համար:

Եւ իրօք բնութիւնը արդար բաշխում կատարած է Զանգեզուրի մէջ, բայց մարդկային օրէնքները եւ պահութիւնը եկած են շարիք գարննելու բնութեան բարիքները: Անա թէ ինչ պէս Գ. գաւառակի թաթար ժողովուրդը ըստ հին սովորութեան, որ սրբազործուած էր պարսկական խաներու կողմէ, իրաւունք ունէր իբրեւ արտօնեալ իսլամ, ամառը բարձրանալ հայկական լեռնամասերը, հոն ցանել, արածել իր հօտերը, իսկ անառն ժամանակները իջնել ձմեռանոցները եւ տաք շրջաններու մէջ անցնել իր ժամանակը ու աշխատանքը: Բացի տեղական թաթարներէ՛ն՝ հեռաւոր Զեւատի, Կասպից ծովու ափերու վաչկատուններն ու հաստատարակները դեռ ամառը չեկած կը քշեն իրենց հարիւր հազարաւոր անասունները, եւ տուն ու տեղով կուգան ամրան 4-5 ամիսները անցնել Զանգեզուրի արտատեղիներուն մէջ (քոչ): Այս դրութիւնը հաստատուեցաւ հարիւր տարի առաջ, ցարական փոխարքայ Յիցիանովներու եւ Երմուզներու կողմէ եւ շարունակուեցաւ մինչև կարմիր փոխարքայ Միխանիկեանները եւ Օրթոնիկիցէ: Այս դրութիւնն ի հարկէ պիտի խախտէր Զանգեզուրի հայ ազգաբնակչութեան տնտեսական բարգաւաճումը եւ մինչև իսկ պատճառ պիտի դառնար անոր քայքայման:

Մենք տեսնք որ Հայերը եւ Քիւրդերը կը բնակին լեռնադաշտերը եւ լեռներու ձորակները եւ որ անոնց բնակած վայրերու 30-55% արտատեղիներ են: Այս պիտի շրջաններ բնակելով սպասելի էր, որ անոնք օգտուէին արտատեղիներէն եւ զարգացնէին ալպական մշակութիւնը իրենց հողերու վրայ: Սակայն քոչի պատճառով անուանական կը դառնայ այդ սեփական.

նութիւնը, քանի որ լեռները միայն հինգ վեց ամիս կարող են օգտագործուիլ, իսկ այդ ամիսներուն ալ անոնք թռչնոր թաթթարներուն են արմատներուած: Այսպիսով Չանգեզուրցի Հայր փաստօրէն ոչ հնարաւորութիւն պիտի ունենար արտերը շատցնել ի հաշիւ արտատեղիներու եւ ոչ ալ պիտի կրնար գարի տալ անասնապահութեան եւ կաթնատուտութեան:

Այդ վիճակը հողայինն ոչ կացութիւն պիտի ստեղծէր Ա. Բ. եւ Գ. զաւտամասերուն մէջ: Այսօր այդ զաւտամասերը դիւաւորապէս արտատեղիներէ բազմացած ըլլալով՝ առ նուազն 50 0 10 պիտի մնային անձեռնմխելի տեղական ազգաբնակչութեան համար, սակայն Ա. զաւտամասի 1825 քառ. վերստին 1000ը Բ. զաւտամասի 2197 վերստին 1000-ը եւ Գ. զաւտամասի 1847 քառ. վերստին 800-ը, այսինքն մօտ 2800 քառ. վերստը փաստօրէն ինչ պատկանիր այդ զաւտամասերու ժողովուրդին, այլ կը մնան թաթթար բնակարաններուն: Ուրեմն ժողովուրդին կ'իջնայ իր տարածութիւն մօտ 3000 քառ. վերստ, մէջը հաշուելով քարն ու ջրը, անտառն ու ձորը, գաղտնիքերը եւ մշակելի հողերը: Հողի առատութեան մէջ՝ Չանգեզուրի Ա. Բ. եւ Գ. զաւտամասերու բնակիչները հողազրկութենէ կը տառապին:

Մենք տեղանք որ Ա. Բ. եւ Գ. զաւտամասերու բնակչութիւնը վիւաւորապէս կը բաղկանայ Հայերէ, յետոյ Քիւրդերէ, ուրեմն վերոյիշեալ արհեստական հողազրկութենէն փաստապէսն ալ նախ Հայերն են եւ յետոյ Քիւրդերը: Այս ժողովուրդներու վիճակը աւելի էր ծանրանայ եւ այն պատճառով, որ իրենց լեռներէն ու արտատեղիներէն զրկուելով՝ փոխարէն չէն ստանար ո'չ դրամական, ո'չ ալ հողային վարձատրութիւն: Անոնց առջեւ երկու միջոց կը մնայ իրենց նուազագոյն պահանջները զոհացնելու: 1. Զեռքը մնացած քարքարոտները մշակելի դարձնել: 2. Լեռներէ իջնել դէպի հարթավայրերը, ուր հողային տարածութիւններ կարելի է գտնել:

Առաջին միջոցը անոնք, փորձած են ժայռերուն վրայ հող բարձրացնելով, վերակի առուններ շինելով, որպէսզի քարէն, ժայռէն բերք ստանան: Բայց ատոր ալ սահմանը կայ: Ժողովուրդին մշտական աճման առջեւ այդ միջոցներով հող ստեղծելը չի կրնար բաւարար նկատուիլ: Երկրորդ միջոցն ալ անհնար է, քանի որ եւ խանութը, բէկերը իշխաններուց թաթթարներ տիրապետած են այդ բերրի մասերուն եւ թոյլ չեն տար որ ուրիշները լեռնէն վար իջնեն եւ հաստատուին անոնց վրայ:

Այսպէս, լեռնէն զրկուած, դաշտէն արդիւնուած լեռնականին կը մտար երկու միջոց. — Կամ գաղթել եւ կամ դէպքով հարթել իր ճամբան, դէպի լեռան արտատեղիները կամ դէպի դաշտի բերրի հողերը: Եւ վերջին տասնամեակին Չանգեզուրցի ընտրեց այդ երկու ուղիները — արտագաղթը եւ կռիւը: Այսօր Բագու, թիւրքեստան, հիւսիսային Կովկաս եւ այլուր Չանգեզուր մնացողներն աւելի Չանգեզուրցիներ կարելի է հաշուել: Անոնք փախած են հայրենի երկրէն հողազրկութեան, չքաւորութեան պատճառներով: Երկրին մէջ մնացողները բնագաղթար ըմբռնած են, թէ արտագաղթը հաւատարմ է ինչուստպէս նութեան, հասկցած են թէ պիտի ոչնչանան արհեստական հողազրկութեան հետեւանքով, ուստի յաճախ դէնք են բարձրացուցած կամ թռչնորին կամ հարեւան թաթթարին դէմ, «որը տաննն ուսում է, ձեռն ալ խընձորին է դրած»:

Անա պատեղ է մեծագոյն պատճառը Սիւնեաց երկրի յուզումներուն, մշտատեւ կռիւներուն, աղքատութեան եւ արտագաղթին: Ո՛չ ճատով, ոչ բանաձեւով, ոչ ալ դատարկ խրատներով կը վերան այդ դժբախտ կացութիւնը եւ ցուալի հակամարտութիւնը տարբեր ցեղերու միջեւ: Այս պատճառը վերցնելու երկու արմատական միջոց կայ: Կամ պէտք է թուր արգիւտի Չանգեզուրի լեռներուն մէջ եւ հողերը բաժնուին հողազուրկներուն միջեւ, կամ, եթէ չոյի դուրսութիւնը պիտի շարունակուի, Չանգեզուրցիներուն առատ հող պէտք է տրուի իրենց հարեւան զաւտաներուն մէջ: Ոչ առաջինը կ'ընեն եւ ոչ երկրորդը: Ընդհակառակը բուլշեւի կառավարութիւնը թուի ինչորք օրինակահասցուցած է, իսկ հարթավայրերը ի սպաս բաժնած Չանգեզուրէն եւ տւած Ատրպէյշանին: Չանգեզուրի սահմանը այնպէս է գծուած որ այնտեղի հայութիւնը պիտի ճգմուի լեռներու մէջ թառած թռչնորներու եւ դաշտերու մէջ նստած Ատրք. պէշանցիներու միջեւ: Այդ արտագոյն կացութեան հետեւանքով է, որ այսօր խորհրդային թերթերը կարծես չարախնդութեամբ կը ծանուցանեն, թէ տասնեակ հազար նոր գաղտնիկներ են հեռացան Չանգեզուրէն, դէպի քոյր խորհրդային երկիրները, ուր այդ «քոյր» երկիրներէն պիտի ժառանգեն ախտն ու տանջանքը, բարոյական եւ ֆիզիքական հիւժուճը:

Վերը ըսինք, թէ ինչ անարդարութիւն կը կատարուի ընդ հետեւանքով Ա. Բ. եւ Գ. զաւտամասերուն մէջ, դիւաւորապէս հայ զաղքեակութեան հանդէպ: Եթէ չարթքը միայն այդ ըլլար, եթէ հողազրկութիւնը միայն ատկէ առաջ գար, պէտք էր զոհ ըլլալ Բայց հարցն այն է, որ դեռ չին օրերէն պատկապէս հայ ժողովուրդը դատապարտուած էր քիչով զոհանալու, իսկ իր երկրի լաւագոյն հողերը անտարօքն էր արուէին ուրիշներուն: Այդ վիճակը այսօր եւս կը շարունակուի: Առաջ շատ բնական կը համարուէր այդ պարսիկ իշխանութեան տակ եղած Չանգեզուրի մէջ խաները ու բէկերն էին երկրի տէրերը, եւ զարմանալի չէր որ այդ իշխանաւորները զերգառակին իրենց արհեստակից եւ կրօնակից թաթթարը, անոր տալով հողի լաւ պատասնները: Ռուս իշխանութիւնը դալով՝ հաստատեց նոյն վիճակը: «Այալար» հողերը մնացին աղաներուն, իսկ աղաները կամ իրենք դրանեցին տարածութիւնները եւ կամ փոխանցեցին իրենց ցեղակիցներուն: Նոյն իսկ Ռուսերը մալականներ բերելով Բագարչայ, Բարխուդկա գիւղերը, անոնց, այնքան հող տուին, որքան մէկ տասնորորդն իսկ լունէր Հայը: Ասկէ զատ ինքնապաշտպանութեան պաշտումը, վախը, թալանը ստիպած էին Հայերը սեղմուիլ քիչ տարածութեանց վրայ, համախմբուած մնալ, իսկ տիրող թաթթարը, Ռուսը բռնած էին մեծ տարածութիւններ եւ աւելի թիւով գիւղեր, քան Հայը, հակառակ իրենց փոքրամասնութեան: Այս զաղքեական, ընկերային վիճակը առաջ էր բերած գիւղիցու եւ հողերու անհամաչափ բաշխում: Հայերը թէեւ մեծամասնու-

digitised by  
A.R.A.R.®

Էրզրումէն տրուած սղզանշանը պատահական հանգամանք չունէր։ Ետժամը կազմակերպուած էր։ Անոր տարին կեցեր էին ոչ միայն պետական պաշտօնեաներ, այլ և զինուորներ։ Էրզրում, Սիլվա, Ռիզ, Մարաշ, Սամսոն, Սրապիզոն, մինչև անգամ Պոլիս, — տեղ մը յանկարծական պոռթկումով, ուրիշ տեղ մը կակսածելի շարժումներով, շուարման մատնեցին Էնկիւրին, որ գիշերը ցորեկին խառնած, կը հօկէ և անդադար կախազաններ կ'ապարկէ։ Տոկակին վերջացած չէ քրտական ապստամբութեան հաշուեյարդարը։ Հազարաւորներ կորակ կը սպասեն բանտերուն մէջ և ահաւասով ուրիշներ ալ կը հասնին, կը խնուին իրարու վրայ։ «Հանրապետութիւնը գործիք մըն է որ կը զանազանէ շարքն ու բարին, և ամենուն ալ արժանի եղածը կուտայ։ Այդ գործիքը կը բանի, և է յախտեան պիտի բանի»։ Անկախութեան շրջուն դատարանի նախագահին խօսքերն են ասանք։ Եւ

կը թուի թէ շատ ալ սուտ չի խօսիր Լիլ պէս, այսինքն «չախտան պիտի բանի» այդ գործիքը, որպէսզի կարելի ըլլայ անասան պա՛ն Ծ. Քիմալի զիկատարութիւնը, այլապէս, ստպալունձը անխուսափելի է:

Մինչև այսօր Ազգ. Մեծ Ժողովն էր դժուրօթեան և պայքարի թատերաբեմը: Այսպէս կամ այնպէս, ձայներ կը լսուէին այդ ծողովնէ կար ժողովն մէջ: Այժմ այդ Հնարաւորութիւններն ալ չկայ, ընդհանրապէս երթալով նոսրացան, և մնացածները կը զողան իրենց մորթին վրայ: Վերջին քաջորդին, «Իզմիրի Հերաս» նորէտտին փաշան իսկ Հարկադրուեցաւ քաշուիլ իր գուլը որչ պահելու համար: Կիմա ժողովուրդին մէջ է որ կը բանի դժուրօթեան որը. բայց թուրք ժողովուրդը չի կրնար որ և է խշար ձեռնարկ փորձել առանց վարիչ ուժի: Ինչպէս ջարդի և աւարի ատեն, կառավարութեան դէժ քաշելու համար ալ հրամանի կը սպասէ ան:

Ո՛վ պիտի տայ այդ հրամանը, Ո՛վ պիտի վարէ շարժումը, Էնկիլիին ուժգնօրէն սարսելու համար Անպաշտօն պաշտօնեաներու բանակ մը կայ Պոլսոյ մէջ. տառը հալաբլէն պակաս չեն պահտի սպաններն ու նմանները. նոյնքան և աւելի հօճաններ և մոլլաներ կը համրուին Կան, տակաւին, նախորդ իշխանութեան երախտաւորները, իթթիհատուկաններն ու իթիլաֆուկանները, բեռնակիրներն ու նուաւ վարները: Բայց, ո՛վ պիտի վարէ այս փթթարի բազմութիւնը:

Թուր կառավանները կը ծանրանան, նորէն, իթթիհատի մնացորդներուն վրայ, որոնք մէջ չեն պակսիր յանդուգն դաւադիրներ: Կառավարի բոլոր զգուշութեանց, անոնք նորէն կը պահեն իրենց կազմակերպական ըջիճները. ունին ընդարձակ ցանց մը, որ կը գործէ Պոլսոյ և Մաստուրի գլխաւոր քաղաքներուն մէջ: Անոնք ստպարեղին վրայ չեն երեւար, գեանին տակէն գործելու համար: Մնկաւ որ, քեճակական կառավարութեան համար որուար չեղաւ գրաւել նաև իթթիհատի հարստութիւնները, իբրև «չեքալ դուր»: Վերջին խրտումներուն մէջ, շատ որոշ է իթթիհատական ձեռքբերու ծախակութիւնը. մանաւանդ որ, թէ էրպրումի, թէ Սըվազի և թէ Մարաշի մէջ եղածը այդպէս քանի մը անհասի գործը չէր, այլ ընդհանրական, և թուռցիկ փակցնողները այս կամ այն «Հերիֆ»ները չէին, ինչպէս կ'ըսէ պաշտօնական տեղեկութիւնը, այլ ժողովուրդը ինք, — այնքան որքան կարելի է հասնալ Թուրքիոյ մէջ:

Սէ սակայն ձախտեցան, որովհետեւ Էնկիլիի շարժան մէջ դրած է իր բովանդակ ուժը, կուսակցական, վարչական և զինտրական, և, ինչպէս Մուսուան, ամէն բանէ առաջ կը մտածէ իր պահպանութեան վրայ:



Շարժան ընդարձակութիւնն ու ծանրութիւնը յայտնապէս երեւան կուգայ Ըսմէթ փաշայի գեկուցումէն (Ազգ. Մեծ Ժողով, 12 դեկտ.) նոյ. 14ին, Սըվազի մէջ յայտարարութիւն մը կը փակցնեն, որ գլխարկի ինչորը կ'արձարծուի գրողէ հոգեբանութեամբ, բայց աւելի կարեւոր էր նոր ալ կը լիշուին Մասնաւորապէս կը շեշտուի թէ երեսփոխանները շատ զրուած են և թէ ընդհանրապէս թիւր 170ի կը

Հաննի նոյ. 22ին Կեսարիոյ մէջ Աճնտ Կոմիտի անուն գործիչ մը կը ձեռնարկուի, իբրև կուսակց քրտական շարժան: «Այս մարդը պարագանտ կ'ընէր թէ շէյխ Մալխու յաջորդ մը նշանակուած է» նոյ. 24ին բուռն ցոյց մը տեղի կ'ունենայ, առաջնորդութեամբ Շէյխ Հաճի. Յոսանի (կախուած), Խուռն բազմութիւն մը կուսակցին ընկարանը երթալով, զենք կ'արձակէ, քար կը նետէ և ջարդ ու փշուր կ'ընէ շէյքին ապակիները: Ընդհարման միջոցին, ստիկաններ և զինտրներ կը սպաննուին: Կացութիւնը այնքան կը ծանրանայ որ, օգնութեան կը կանչեն կանոնաւոր գործը և ամբուրանց հրամանատար Կասան փաշան: Այս բոլոր լուրերուն աղբիւրները թրքական ըլլալով, կարելի չէ ամբողջական գաղափար կազմել Էրպրումի այդ մեծ դէպքին վրայ, որուն հետեւանքները կը տեսնեն մինչև այսօր:

Նոյ. 25ին, նոյն ձեւով յարձակում մը կը կատարուի Քիլիկի մէջ և կացութիւնը այնքան կը ծանրանայ որ, Կոմիտիի գրահատը շոգեպիլը Սեւ ծով կը սուրայ, սարսափի տակ պահելու համար ըմբոստ ժողովուրդը: Դեպքին լրջութիւնը դատելու համար, կը բաւէ ըսել թէ անկախութեան դատարանը դիշեր ցրելի նիստ գումարեց, անմիջապէս դատելու համար 137 ամբապատեալներ: Մահապարտները կախուածն արդէն, բայց նոր կրպանաւորներ կը լեցնեն անոնց տեղը:

Նոյ. 26ին շարժումը կը վարակէ Մարաշը, նոյնքան էթէ ոչ աւելի ծանր համեմատութիւններ տանելով, Շյտեղ ամբաստանութեան տակ է ամբողջ տեղական իշխանութիւնը, և արդէն շղթայակապ Էնկիլիի փոխարած են վարչական ժողովի (մէճլիսը փոսորէ), երկրագործական և առեւտրական սեռակներու և թաղապետութեան անդամներ և բազմաթիւ երեսիլներն են: Դեռ ամբողջ գործը հաշտեցարդարի չէ ենթարկուած:

Դեկտ 4ին, Կիրտանի մէջ, Շէյխ Մուհարրէճ կը ձեռնարկէ ըմբոստութիւն մը սարքելու, բայց կը ձախողու:

Այս բոլոր շարժումներուն մէջ, կառավարական գեկուցները կը տեսնեն միայն յետաշրջական տարբեր, հօճաններ, մոլլաներ և շէյխներ — ինչպէս քրտական ապստամբութեան պարագային: Ամէնքն ալ յառաջադուրնէ չափուած կ'ընտան և սե ցանկը անցած են: Ու հիմա, անշարժութեամբ մը, Էնկիլիի կը ձգնի համոզել թէ բոլոր խառնակները դուրսէն եկած են. — Էրպրումի պարագայուր, համի Օսման, դէպքէն 10 — 15 օր առաջ արտասահմանէն եկեր է: Կեսարիոյ պարագայուր, Աճնտ Կոմիտի, երկար ճամբորդութիւնէ մը յետոյ Կեսարիա իջեր է, Կիրտանի գործիչը, Շէյխ Մուհարրէճ. նոր Հանրէն և արտասահմանէն... լսել կ'ուզեն թէ բուն երկրի ժողովուրդը ո՞րք է և հաւատարիմ, և միայն դրեցիներն են որ կուզան կը խանդարեն:

Իրականին մէջ, շատ խախտու է այս բացատրութիւնը որովհետեւ, բոլոր պատմութիւններէն որոշ կը տեսնուի թէ ըմբոստութեան ցանցը լայնօրէն փռուած էր գրեգորու և քաղաքներու մէջ: Իմամները, զիւլպատները, թուրքաւորները վարիչ դեր կատարած են գրեթէ ամէն տեղ և գիւղացիները սպառազեն խուճած են գէպի կեդրոնները: Քիլիկի ինչպէս Մարաշի մէջ, շրջականներէ բազմութիւններ ճամբայ եկած են յատկապէս օրուան իշխանաւորները տապալելու,

կան քաղաքները «աւարտ տարւ Համար»,— Համաձայն պաշտօնական կեդուցճան:

Այս Համասարած դաւադրութենէն անձանն չէր կրնար ըլլալ Պոլսը, որ երբէք չէ ձարած Էնկիւրիի դիտատարութիւնը, և կը ճնայ ծոխրի տակ թաղուած կրակ ճը, Հա կառակ բոլոր զուշուրութենցը եւ արդէն, Անատուրի լախըն ու երկաշիքը չափելէ և աճէն տեղ տար քսան կախազան կանգնելէ յետոյ, անկախութեան դատարանը իր ուշադրութիւնը կեդրոնացուց նախկին ծայրաքաղաքին վրայ: Եթէ Հրատարած քաշտօնական քննութեանց, Բիզնէ և Կրիստոսի երեւան Հանամ են Պոլսոյ մեղակցութիւնն անսասանելի և թէ Պոլսոյ մէջ կը գործէ գաղտնի ճարմին մը, գրգռիչ գիրքեր և ճարմին ու գործիքով Անատուրն Այդ Հրատարակութիւններուն առթիւ, արդէն իսկ ձերբակալուած և Էնկիւրիի դրուած են 40—50 Տղի, (ձեկը Հոջ գրավաճառ) իբրև կողմակիւրջ կամ մեղակից ընթատական շարժան: Եւ աճէն որ տանեակներով կ'իջան աստիճանութեան Ծանկը:

Էնկիւրիի անկախութեան դատարանը Կրիստոսի կառուարները կարելի ասել յետոյ, Պոլսու անցու գեղմ. 21ին, բայց ինչճեմութիւն չունից երկրոր Պոլսու Ոչ միայն ճահաւթներ չարձակել Խոխկին ծայրաքաղաքին մէջ, այլ և Հրամայեց որ անմիջապէս Էնկիւրի փոխարին տնտեսի ձերբակալուած յանցաւորները: Այս թուարկի աչցելութիւնը — ընդամենը 3—4 որ — պարտապէս ցոյց ճըն էր Պարսոյ զին Մեկու կէս ասարկ ասարկ աչ ճիշդ աչ ձեւով զոչ Հանեցին Պոլսը, Էրբ, արքանշահի ճը վրայ, ձերբակալուեցան և ունկախութեան դատարանին յանձնուեցան թուրք իրութեանը: Գրոխն ըլլալով «Քանքին» Հոչազուար Կրտսէն յն ճահար: Այն ատեն դատարարութիւնն աչ տեղ ունեցաւ, բայց աճէն ինչ թատերական էր, և իճարգիքները տեւարտ արձակուեցան, աւելի վերջը կրելու Համար ասարկ տեսակի պատիժներ:

Մնար որ, բոլորովն «անճն» չէ Պոլսու Իրեւ թուր Հակաբէճաքական կեդրոն. Հին մարտաքաղաքը միշտ ճոտահարութիւն կը պատմաւե: օրուան իշխանաւորներուն էն: Կրիւր այնքան կ'անկաճուտ է Պոլսոյ Հանրէզ, որ անդադար քննիչներ, արտասովոր մարմիններ կը զրկէ, պաշտօնակալութիւններ կամ անուանուեցին կը կատարէ: Այնտեղ ոչ մէկ պատասխանատու պաշտօնեայ անուր է իր սթոնին վրայ: և Էնկիւրիի աճէնէն սուր, աճէնէն Հուատարած աչքն ալ դատարարուած և անճալու մէկ օրէն միւրը, պարզ «Փուկնայի» ճը, կամ թիթի անհոգութեան ճը Հնուեակցով: Պարտոյ մէջ, ճանապարհ Հակոբութեան տակ են թուր իսլամական թաղեր, Պայպետ, Շահաւտ Պաշի, Ազեւրայ, Փաթիհ, Էյուպ, Սիլուարի ճովկերեայ, ճար, Գաւաղիզի սրճ կէտերը: Ասպարի շատ ճը փոշիւր: Աստիճանութիւնը ի զուր Հերքեց թէ թուարկի չէ փակցուած Պոլսոյ մէջ: Երբ ճանր պարտապէս ճը կը ներկայանայ, թուրք «արգիական» վարիչներն ալ կը Հնուեակ Պալը Ալիի անհակահան սովորութեան — Հերքումներով կուտան լուր: Երբ վարիչները ինչ շատ լաւ կը Հակակայ այդ Հերքումներուն իճատը, և անբող պատմութիւնը կը օտարձուի անգիր զարութեանը:

Ինչպէս ըսինք, դիտարկ տալնային արտաքին երեսն է

միտն, եթէ կ'ուզէք անոր դիտարկը: Իսկ բուն պայքարի իշխանութեան, ակոցեութեան կրկն է: Այս իրողութիւնը կողմնակի իտատմանցաւ անկախութեան դատարանին նստարարը, Պոլսոյ մէջ, ցաւ յայտնելով որ ճիպար ճը վարիչու մէջ զորքացած գարտ առաջնորդ Հանգիսացած է յեւադիմական շարժումներուն: Այդ գարգացաններուն մէջ մեծածախնութիւն կը կազմեն իթիլՀատապանները, և բոլոր անոնք որ իշխանութիւն և զիրք ունէին երկէր Մասնատարական ատոնց զին ուղղուած են պատմական օրէնքին մէջ կատարուած չորս փոփոխութիւնները: Առաջին անգամ չէ պարտապէս արանագրութիւններ կը ճարգուին այդ օրէնքին վրայ: Եւրօպայի ճը քիչքի՛ ճնուել կուտայ նոր յանկանածի ճը: օրինական գառնածի ճը: միշտ ինչպէս 1915ի տեղահանութեան առթիւ, իրարեւ ետեւէ Հրահանգներ և արէնքներ կը մշակելին, պարագաններուն յամարքներով:

Ի՛նչ կը տրամադրեն նոր փոփոխութիւնները,— Մահ բոլոր ոտանց որ կը յանդիսին ճանակի կամ անբողական փոփոխութիւն կատարել ներկայ Մահաճանարութեան մէջ, ասպակի Ազդ. Մեծ Ժողովը կամ Գործակարներու Խորհուրդը, կամ արգիւք Հանդիմանալ անոնց գործունէութեան, զրգուել և ապատմաբութեան մզել ճարգուրը ճաւ խոտելով փողոցներու մէջ կամ «Խաթիթ» փակցելովով, դաւադրել Հանգիսեւորութեան նախապահին անձին զէն ևն:

Բացարարութեան կարտ չեն այս կէտերը. Էնկիւրիի պարգոտէն կ'ուեցնէ իր ինչպապաշտպանութեան զէնքերը: Իւրարանչիւր պատմական տրամադրութիւն՝ առճը ճը, գնարքեր ճըն է, ուղղուած՝ ժողովուրդի դիտուն: Օրէնդիր և գործադիր՝ մեխանիկ ձերբներ են: Ինչպէ՛ ճարտաին առիթէն, մարտկոց ճը աւելի շինելու Համար: Փանի որ անխաւասփելի է կուրը,— սպասարհիւրի՛ք: Ա՛յն տիրապէտքաւորութիւնը, արիշտ աճէն ինչ մանրամասնութիւն է:



Եւ, Կորէն ու Կորէն, Կերքին,— աւելի ճիշտ՝ անձնական — ինքնապաշտպանութեան միջոցները կրկնապատկած ատեն Էնկիւրի չի ճուտար միւս Հիմնական ճրագիրը — ոչ-թուրքերու վերջնական ոչէջացուած: Իրարեւ ետեւէ, բարոյական մեշտմով, կուրէն և սպաւախիճներով, յաջողեցան ըսել ալ փորճամասնութիւններուն՝ թէ կը Հրամարին Լոզանի դաշնարհին տրամադրութիւններն: Առաջ՝ միայն որոշ ճարգուեցներու ճարն կը խաւէին. այժմ արդէն պահանջ դրուած է որ Հրամարին անբող ճաշնարհէն: Դաշնարի ճարակար ճըն էր Լոզանի թուրքը. յատկապէս Թուրքոյ կողմէ Կերքնուած, անոր ճահարուն Համաձայն շարտարուած: Բայց, «յարթական» Եւրոպան և «յողափական» Ռուսաստանը այնքան արհիւն Էնկիւրիի անբողակը, որ այս վերջինը իր ստորագրան ալ շատ գտաւ, և անմիջապէս ձեւաւորակց ընդուեւած յանձնարարութիւնները օրէնք: Այս անապարանք ունի շատ գործնական շարժարթներ: Նախ, «բայաններու Հօտի ճը կը վերածէ Թուրքիա թացած փորճամասնութիւնները, բացարձակ տէր արբական դաւալով անոնց բոլոր իրաւունքներու,— պատիւ, ճոյք և կեանք: Այս կէտը այնքան ճիշտ է որ, նախկին արտաքին գործադար

Երբքի Գոյա պէյ, Ժընեէն դարձին, Հրապարակա կ'ազարարէր, Թուրք Թերթի ճը ճիշդով.

«Եթէ Ազգերու Դաշնակցութիւնը խոտնշուկէ գանգատող անձերուն պահանջները, նորէն անհանդիսա ընկրու ճամբայ ճը պիտի բանայ փոքրամասնութիւններուն Համար, որոնք այժմ Թուրքիա կը գանուին և բազմիցս յայտարարած են, թէ գոհ են իրենց վիճակէն և կը Հրաժարին Լոզանի դաշնագրին հըրը յօլաւածէն» (Խոյիրը կը վերաբերի դրամատուներու մէջ գանուած Հայկական աւանդներու և աւհասարակ «լընալ» գոյքերու մասին կըզ բողոքին):

Երկրորդ՝ փոքրամասնութիւնը իրաւունքները իր Հասկացած կրանակով Եջիկէն — ժրտիչ յետոյ, կրնայ փութացնել թրքացուծը, որուն ճամբան շատանց Հարթուած է ոչ-Թուրք դպրոցներու կնիցուծով և ուրիշ կարգադրութիւններով: Արդէն իսկ որինակի ճը ներկայացուած է Ազգ. Մեծ Ժողովին, ոչ-Թուրք լիզուներու գործածութիւնը քնչիւտ Համար: Իսկ Անաստուի մէջ, քաղաքապետութեանց միջոցս և արդիւնքին Թուրքերէնէն տարբեր լիզու խօսիք Երրորդ՝ կը դիւրացնէ ոչ-Թուրքերու Հանրային Հարտութիւնաց գրուածը, որ արդէն օրակարգի վրայ է: Իրականին շատ Հաճարձակ չեն ոչս գնանին վրայ, և կողմնակի, պտշարողական շարժումներ կը փորձեն: Բայց ճրագիրը ակներև է: Անհատական սեփականութեանց յափշտակութիւնն ալ աստիճանաբար սկսու. մէկ տարիէն միւսը աւելի փորձառու դաճան. և եթէ, «լընալ» գոյքերու սկզբնական օրէնքով ասոր պիտի յափշտակէին, այսօր արդէն Հարկերը մէկէն աւարի կուտան: Նոսրապէս գրած էինք թէ ոչ-Թուրք դըպրոցները, ճանաչանց Հայկական Հաստատութիւնները այլևս չեն կրնար վճարել կառավարութեան պարտաբարձ Թուրք բուսցիչներուն թշտաք (ժամը 150 դրշ.): Այս առթիւ պարուած գանգատներուն վրայ, կառավարութիւնը, փոխանակ ճուր թիթիցներու պատարից իր քնիչներուն որ երթան Հասկանալ դպրոցներուն եկամուտը, կալուածական Հաշիւները, մէկ խօսքով՝ եզած-չեզածը յանձնեն: Այս անձկութիւնէն մէնչու գրուածը՝ երկար չէ ճամբան: Լուսարդն պարագային, պիտի յայտնեն թէ «կառավարութեան ձեռքէք մասակարարութիւնը, իւր ալ կ'ազատիք, մենք ալ»: Եստապաճակ չճանկիւտ Համար, աւ այժմ գերեզմաններու շտրը կը լիցիւրին, աւտու ճը ճամբայ բանող սալով, արիշ օր կը գերեզմանատաները քաղաքապետութեան յանձնելու ճրագիր ճշտակով են:

Վերջացող տարուան ընթացքին, շատ լուրջ քայլեր առնուցան, ոչ-Թուրք Հաստատութեանց ներկայ կողմնակրարութիւնները քանդելու Համար: Կիճքերը փակուած են արդէն. բայց դուռերն ալ իրորու տեսէ կը փակուին: Անպէս որ, մեծ ճիգի ճը պէտք չկայ, մահացող Հարուածը տալու Համար:

### ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԵԱՆԻՔ

#### ՆԱՍԱԼԻԱ ՄԱՏԻՆԵԱ

Մտա կրկու ամիս առաջ երկարատեւ ու ճանք հիւանդութիւնից յետոյ Թիֆլիսում վախճանեց ընկ. Նատալիա Մատինեանը, որի անունը սիրտ կերպով կապուած է Հ. Յ. Դաշնակցութեան սկզբնական շարքէն: Լանի պատմութեան հետ: «Պրոշակի-ի ընթացողներէց քշերին յայտնի կը լինի Նատալիա Մատինեանի անունը. բայց ինանական թւերին, երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը նոր էր «Կիմուել» նրան գիտէին ամէնքը, որոնք գործն մասնակցութիւն ունէին Հ. Յ. Դաշնակցութեան մէջ:

Նա, ինչպէս նաեւ իր կրտսեր քոյր Սաթինիկը (հանդուցեալ իշխան Արդութեանի պարին) գեղ շատ երիտասարդ հասակից ոգևորուած էին հայրենասիրական եւ յեղափ. զաղափարներով:

Թիֆլիզի գեմնագիտող աւարտելուց յետոյ ընկ. Նատալիան գնում է Մոսկվա մանկաբարձութիւն ուսանելու համար, որտեղից 1890 թւին վերադառնում է Թիֆլիզի եւ անմիջապէս մտնում Դաշնակցութեան գործերի մէջ:

Թէ՛ Գրիտափոք Միքայէլեանը, թէ՛ Չաւարեանը եւ թէ՛ Ռոտտոնը շատ էին գնահատում նրա անձնուէք եւ զգպտնապան բնատրութիւնը եւ յահար շատ պատասխանատու յանձնարարութիւններ առում, որ նա միշտ բարեխղճութեամբ կատարում էր, երբեմն մեծ զոհաբերութիւններ գնով:

Յոլիցիներեան հայահալած ռէժիմի օրերին ընկ. ըուէի Մատինեանը մի քանի անգամ ձերբակալուած էւ տախներով բանտարկուում է, բայց ամէն անգամ քանտից ազատուելով՝ աւելի եւս մեծ եռանդով ներուում է կուսակցական գործերին:

Իննելով անձուէք յեղափոխական՝ նա միեւնոյն ժամանակ ուղաղիք, սքտացու ընկեց էր, եւ քուսիք բուն իմաստով քարի մարզ: Այս կամ այն ընկերով հիւանդութեան ժամանակ յոճաք ամբողջ օրեց եւ շաքաթներ թողած պմէն ինչ՝ զալիս էր խոսանլու հիւանդին, շատ անգամ յանքուն գիշերներ անցկացնեց լով նրա անկողնի մօտ:

Վերջին տարիները ընկերուէի Մատինեանը ապրում էր նիթական շատ ընկ վիճակ, որը եւ վերջնականապէս քայքայեց նրա առողջութիւնը:

Խորին յարգանքով եւ ակնածանքով խոնարհուում ենք մեր անձուէք եւ զաղափարական ընկերու թաքմ շիրմի ստալ:

### Հ. Յ. ԴԱՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՕՐԸ

Նորութիւն է մեր կեանքի մէջ «Հ. Յ. Դանակցութեան Օր»-ը, որ հաստատուց 10-րդ Բնդհանուր Ժողովի կողմից և որ այսուհետեւ, ամէն տարի, Հոկտեմբեր ամսին պէտք է տօնի ամէն տեղ, ուր ուղարկուած են դաշնակցական զազափարնները դաւանող հայ աշխատատարական զանգուծները Աճէն տարի դաշնակցական ընկերներն ու համակիրները պէտք է յատկացնեն մի օր՝ ապրիլու համար Դաշնակցութեան փառաւոր անցեալով, համակելու համար Դաշնակցութեան աշխարհահայտացրով և ազազայ զոր ծունկութեան ծրագիրներով, ընդհանուր զորմի ներկրւելիքնց մէկ օրւայ աշխատանքի արդիւնքը: Աճէն տարի, հոկտեմբերի մէկին, մեր ճամուլը ամբողջապէս իր էջերը պէտք է տրամադրէ Դաշնակցութեան անցեալի արձանագրութեան ու ցնահաստութեան և վազւայ անկիրների ճշտութեամբ նոր սերունդները դաստիարակութեան տօն պէտք է դաւանի այդ օրը:

Եւ առաջին փորձը լիովին արգարացրեց 10-րդ Բնդհ. Ժ. ղովի յայտերը. անցած հոկտեմբեր ամիսը զազափարնայ աշխատատարութիւնը գրիթէ անբողջապէս ապրեց Հ. Յ. Դաշնակցութեան կեանքով, ոգևորւեց նրա զործերով և մի անգամ ևս հանդիսարարապէս հաստատուց, թէ իր հոգին ամբողջապէս ձուլւած է Դաշնակցութեան հոգու հետ:

Դժար է լրել երկայայցնել «Հ. Յ. Դ. Օր»-ւայ տօնակատարութիւնը. շատ եղան կողմանիկ պաճ հանդէսները, բազմաեսակ և ցլւած համարեա անբողջ երկրագնդի երեսին՝ Սիէրու-Նեւազա լեռներից սկսած մինչև Եւրոպա, Բարկաններ, Նգիպոստ, Փայդոստին, Պարսկաստան և ամէն տեղ, ուր ապրում է զազափարնայութիւնը: Այս համառօտ նկարագրութիւնը ոպօտ սերագրիմն է լսկ իրականութեան:

Սկսեց հեռուար Ամերիկայից, ուր «Հ. Յ. Դաշնակցութեան Օրը» տօնեց ամերիկահայերին յատուկ խանդավառութեամբ: Դաշնակցական ճամուլը — յոյզ «Հայրենիք»-ներն ու «Ասպարէզ»ը — յատուկ համարներ ներկրեցին օրւայ տօնին: Ամազիրը, ճանապարհապէս, լոյս տեսաւ ճոխ բովանդակութեամբ Կոմիտէները ամէն տեղ կողմանիկացեցին հրապարակային հանդէս-ժողովներ, որոնք, հակառակ որսչ տեղերում օրի անկառօտ լինելուն, խուռներած բազմութիւններ քաշեցին դեպի հանդիսարարները: Հանդէսներն ու ճառաստութիւնները ինչպէս այդ օր բազմապէս վերաբերուած էր Դաշնակցութեան Անկարիի է մէկ-մէկ թել տեղի ունեցած բոլոր հանդէսները, ոչ էլ կարելի է պատկերացնել հանդէսներին ճանապարհ հասարակութեան բարձր ոգևորութիւնը: Բաւականաճ միայն մի փոքրիկ մէջբերումով Տիբոօսի հանդէսի նկարագրութիւնը:

Ինչպէս Ամերիկայի շատ քաղաքներում, այնպէս և այնտեղ «Հ. Յ. Դ. Օր»-ւայ առթիւ տօնեց և Հ. Յ. Դաշնակցութեան 35 ամեայ յրեկանը: Հանդէսը տեղի է ունեցել Հոկտ. 25-ին. «Որսչեալ ժամանակէն առաջ, դրում է «Հայրենիք»-ի թղթակիցը, ժողովուրդը զանդ-զունդ կը վազեր էլլը սրահը իր յարգանքի և երախտագիտութեան բաժնիը

երկրու համար հայտնեան մեծ զաւկին՝ Հ. Յ. Դաշնակցութեան, որ 35 տարիներ շարունակ անվարան ու անկուռ կամքով ուզած էր բարձր պահել հայ ազատասնէջ ոգիի դրօշը... Փամը 2-ին սրահը լիքն էր արդէն Առեանպան ընկ. բժ. Դարբինեան բացւած յայտարարեց ժողովը, և յարակաջ ընկ. Յովսէփ Արզումանի յիշատակը յարգելէ ետք, սուգի արտայայտութեան փայլիտի մը խոր լուսութիւնը իւրեցաւ «Մեր Հայրենիք»-ով, որուն կը ճանակցէր ներկայ հասարակութիւնը սնխարք»: Գրական-երաժշտական ճանկ յետոյ, ստեղծութեան ընկ. Վ. Քանարճեան, Ա. Միքայէլեան և զօր. Սեպուհ, որոնք ճանկացան օրւայ նշանակութեան վրա՝ վեր հանելով այն հսկայ դիրք, որ կատարեւ էին մեր անմահ Հիմնադիրները և այն հսկայ Լէ՛ գեծը, որ շղթի մեր կողմեր իր դիակներով Հ. Յ. Դաշնակցութեան 35 ամեայ Ծանաղարհին վրա՝ հասցնելու համար հայ ժողովուրդը իր խեղճով՝ Ազատ, Անկախ և Միացեալ Հայաստանին:

Ստեղծած ոգևորութիւնէն քաջաբերած՝ ձեռնորկեցաւ հանգանակութիւն մը «Ազատագրութեան Փօնա»-ի անունով Ժողովուրդի սուար մեծամասնութիւնը ճանակցեցաւ այս հանգանակութեան 50-ով, 40.ով 25-ով, 5-ով, 1-ով Կարճ ժամանակայ ընթացքին գոյացաւ 3856 տարբի պատկառելի զուճար մը: Հասարակաց մեծելալին անտարբերութեան այս օրերուն այս գումարը ինչնին բաւական է ապացուցանելու, թէ Դաշնակցութիւնը չէ՛ միւս և չի՛ մեռնիր»

Այս հակիրճ նկարագրութիւնը ճօտուօր պատկերն է և Ամերիկայի միւս քաղաքներում կազմակերպուած «Հ. Յ. Դ. Օր»-ւայ հանդէսները:

Դաշնակցութիւնը նոյնն է և ովկանտի այս կողմը: Փրանսա-սահայ նոր գաղութը երես-ն քերք նոյն յուզիչ արածադրութիւնը, ինչ որ և ամերիկեանը: Մարտիլլ բացառութեամբ, ուր անիոյթ կազմակերպութեան հետեւանքով, հանդէսն անցաւ ոչ գոյացուցիչ, միւս բոլոր վայրերում ժողովուրդն արտակարգ ջերմութիւն ցոյց տեց պէպի «Հ. Յ. Դ. Օր»-ը: Այսպէս, հսկայ. 4-ին հրապարակային փաջուն ժողով տեղի ունեցաւ Վալաբեսկուն: Նոյն օրը տեղի ունեցաւ հանդէս Քուպեում, որին ճանակցեցին և Տեհազվիլի ու Վիվիեի ընկերներն ու համակիրները: Նոյս. 11-ին «Հ. Յ. Դ. Օր»-ը հանդիսարարապէս տօնեց նաև Վիեննի, ԼաՍեյնի ու Պոլեի մէջ: Սակայն, տօնակատարութիւնն ամենից տեղի բացմաճ մարդ ու հանդիսարար եղաւ Փայլուած, Հոկտ 11-ին: «Փէթի ժուռնալ»ի ընդարձակ սրահներուն մէջ, գրում է «Յառաջը, տօնեցաւ «Հ. Յ. Դաշնակցութեան Օր»-ը բնկերական այնպիսի խանդավառ մթնոլորտի մը մէջ, որ աննախընթաց էր Փարիզի համար: Սրահը, հակառակ իր բացառիկ ընկարձակութեան, նեղ կուզար իրարու ետեւէ հասնող ժողովուրդին, որուն մէկ ճաղ մնաց ուղիք: Հանդէսին նախադասուած էր ընկ. Բժ. Տէր-Դաւթեանը. ստեղծութեան ընկ. Ա. Ահարոնեանը և Մ. Վարսեղեանը: Կարգադրեց Ռուս. Սօց-յիղափոխական կուսակցութեան ողջոյնի հետեւեալ հեռազրու»

«Մեր եղբայրական ողջոյններն ենք ուղղուած մեր հերս սական պայքարի 35 ամեակի առթիւ. մաղթում ենք կատար-

եալ յաշուութիւն և անբողջական յաթնամակ մեր Հասարակաց իրգեակները իրազորման համար»:

Ապա մեծ յաջողութեամբ տնցալ գրական-երաժշտական բաժինը, և հանդէսը վերջացաւ պարբերով:

Մեծ յաջողութեամբ կատարեց Հովա 10.-ին, «Հ. Յ. Դ. Օր»-ույ հանդէսը և Պրագայուց, ուր միաժամանակ տանեց և Հ. Յ. Դ. 35 ամեակը: Այտասանում ճառերից առանձնապէս հետաքրքրական էր Ռուստոսանի Սոց.-Յե. դափոխականների Արտասահմանեան Պատերազմութեան և Հայաստանի կազմակերպութեան ներկայացուցիչ ընկ. Վահան Մինախորեանի խօսքը: Առաջ բերեց այդ մասի էական մասերը:

«ՅՔ և Կոստի աւանդն այն արտազուգի փոխարարեալութիւնները, որ կան Հ. Յ. Դաշնակցութեան և Սոց.-Յե. դափոխականների կուսակցութեան միջև և նրանց բովանդակ անցեալ պատմութիւնը, կը տանենք, որ դա անցողակի բնոյթ չէ կրում, այլ տեսական է, դա թէև իրաւարական բնոյթ չէ կրում, բայց եղի է սարիների ընթացքում. կարող է որ և է ձեւակերպութիւն չունենալ, բայց մտում է իր բարձրութեան վրայ, եթէ կան Հիմները, Եւ զո՛ւ միայն ծրարային համանմանութեան սղիւնը է—կան շատ աւելի ծօրիկ ծրարով կուսակցութիւններ՝ առանց որ եւ է ներքին կայի, որոնք չեն ստանձն փոխարարձ զպայմանը հանդէպ միմեանց: Ձե՛ն էլ կարող սակ, որ դա զդեռն է փիլիսոփայական նման աշխարհահայացից»:

Այդ խորհրուար, միացեալ կապը կայունում է նրանում, որ պատմական զէպերի թերումով նրանք կապւած են եղի՝ մէկը առսական, միւսը՝ Հայկական իրականութեան մէջ՝ ինչ որ մի մտերմական կեանքով, բնագրով, որ արտայայտում է երկու կուսակցութիւնների զործիակերպի մէջ: Ահարեկից Սագսովը իր կեանքի վերջում կուսում է՝ «Թո՛ղ կորչի բանութիւնը» ուղղով այդ խօսքը բանակարներին: Բոլոր դաշնակցական գործիչները նոյն ճիշն են արձակել, ինչպես Արամ Արամեանը կտրազանի տակից՝ «Կեցցէ՛ ապատութիւնը»: Սոց.-Յեգափոխական Կախաչեւը, որ բոլոր հնարասարութիւններն ուներ կառքի մէջ իր ուսմը, նեւտելու, վերջին վայրկեանին ձեռքը յետ է քաշում, որովհետեւ տեսնում է այնտեղ իր զոհի կողքին նստած նրա կնոջը: Եւ երբ հայ յոգափոխականը ասում է. «Գանանց երբեք ձեռք տալու չէ վրէժնիցիլը քաջ ֆիդան», եւ այստեղ էլ տեսնում են համանման զպայմանները:

Յիշում են մի շարք ահաբեկչական գործիք՝ մեր կուսակցութեան համար կատարեան Դաշնակցութեան ձեւքով և փոխադրածար, մեր կուսակցութեան ընձեռած օժանդակութեանը՝ զէնք, գրականութիւն փոխադրելու և այլ գործերում: Սրանք արտաքնապէս չեն երեւում, բայց կան ու կը մնան: Եւ կը ցանկանալի, որ այդ կապըմար ոչ միայն յանուն երկու կուսակցութիւնների, այլ և հայ ժողովրդի Հասկերի համար: Եւ ինչքան որ առաջ մեծ ժողովուրդը մեզ հետ շփան մէջ է, անհրաժեշտ է սենեակը նրան որպէս բարեկամ՝ յանձին Սոց. Յեղ. կուսակցութեան:

Դուք այսօր օտարութեան մէջ էք տնում Դաշնակցութեան 35 ամեակը, բայց դուք չէք տնում մի պարտում օր: Ձեր երեւութապէս պարտածի դրութիւնը չի ներկաշ-

նակում այն բարոյական յաթնամակին, որ ունեցաւ: Դաշնակցութիւնը Բարոյական յաթնամակ կայանում է նրա գործունէութեան մէջ իր զիրքերի մէջ Դաշնակցութիւնը անօր է: Հայաստանում այսօր սիրող կուսակցութիւնը քաջ առ քաջ մօտենում է այն ծրարին, որ հետապնդում էր մեր, ինչպէս և մեր կուսակցութիւնը: Դատակարգային տարբեր շերտերի մէջ հակամարտութիւն որոնող կուսակցութիւնը այսօր աշխատում է ցուցադրել, որ նման բան չէ եղի: Եւ երբ դիտում են մեր կուսակցութեան օրգանական կազմը, եւ տեսնում են, որ երկրի մէջ կայ մի խառը ոյժ, որ չնայած բոլոր «լիկւիդացիա»-ներին՝ հաշւի է առնում: Երբ անցնում ենք գործնական աշխատանքներին, չեն կարող գոհունակութեամբ չլիչատակել, որ Դաշնակցութեան երկրում կատարած գործունէութիւնը հաշւի են առնում նրա ներկայ վարչները:

Աւելին պէտք է սակ մեր կուսակցութեան գործունէութեան մասին: Հասարակ զուգարկութիւն չէ, որ Դաշնակցութիւնը տարագիր է: Երբ հայ ժողովրդի երկու երրորդն է տարագիր, Դաշնակցութիւնն էլ պէտք է տարագիր լինէր: Նա պարտաւոր էր տարագիր լինելու: Եւ ահա, իր թեւերի տակ առած հայ գաղութները, նա աշխատում է հեռու պահել նրանց այլաբնութիւնից, օտար կործանարար պղծեցութիւններից, որպէսզի այդ ատաղձը նորէն անաղարտ երկիր տանի:

Արժանիքներ կան, որ շատ քիչ կուսակցութիւններին է վիճակւած, և դա այն նահատակներն են, որ տեղ է հայ ժողովուրդը յանձին Հ. Յ. Դաշնակցութեան դեկադարներէ: Եւ երբ այսօր տնում են Դաշնակցութեան 35 ամեակը, մէկ-մէկ պալիս են իմ առջև լաւագոյն ներկայացուցիչները այդ նահատակների, որոնցից՝ ակնածում են նաև նրանց թշնամիները: Երբ խօսում են ժողովրդական արթուն պահակի մասին, եւ պատկերացնում են Խէջին՝ իր առնական ու վեհ հասակով: Ո՛ր ժողովուրդն է ներկայ օրերին տեղ այդպիսի Դարբեալիները: Մենք նրանց կենդանի ժամանակ չգնահատեցինք, և նրանք հանձնատրեւ ու անտրտունջեկան ու գնացին:

Երբ մարդկային մեծութիւնները մասին է իտք լինում, եւ պատկերացնում են Արամին, նախ և առաջ, իբրեւ մարդ: Նման մեծութիւններ մեր պղծ տանեակ տարիների ընթացքում հազիւ է ծնում:

Ժողովրդի Հոգեկան ուժի մասին է խօսում, և եւ պատկերացնում են Ռոստոմին. քաղաքական-ազգային գործունէութեան բոլոր ասպարէզներում էլ նրա գործունէութեան մասին միշտ երկրիւթօրէն ենք մտածում: Ինչո՞ւն էր նրա պատմիչը. չէ՛ որ նա գրեթէ օչինջ գրաւոր հետք չի թողի, իսկ որ և է մեծութիւն սովոր ենք գնահատել նրա գրածքներով՝ հասարակական կամ այլ ասպարէզում: Եւ երկտասարդ մարդ չէ, բայց չեն հանդիպած մի մարդու, որ այնպիսի հագեկան ոյժ ունենար, որ համակեր հանդիպողին, ինչպէս Ռոստոմը:

Երբ իտք է լինում ժողովրդական անաղարտ պարզութեան մասին, պատկերացնում են Ջաւաբեանին, որ կուսակցականը և կուսակցութիւնը չէր գտնում իրարից, որ ընադորէն զգում էր, որ ամէն կուսակցութեան արժանիքը կա-

յանում է նրանում, որ իւրաքանչիւր կուսակցական ձգնի, իր կաշիք ձեղքերը բանայ իր նպատակին համեմուտ համար:

Մտերիմ ընկերական յարաբերութիւնների ճապին խօսելիս՝ պատերազմում եմ Սարգիսին, որ իրապէս հայ ժողովրդի նամենաբարձրանալիք մարդն էր, որ կարճուճ էր, թէ բոլոր դրսի մարդիկ զարմանալի են և ինքն է միայն ամենազովորական մարդը:

Ահա այդ բոլորից յետոյ կո գտնում եմ, որ Դաշնակցութիւնը չպիտի մեռնի, որ այս 35 ամեակը պիտի հիմք լինի մի նոր 35 ամեակի, որ նա պիտի հասնի իր իգէալինս:

Անցնենք դեպի Բալկանները Բողոքարիայում «Վ. Յ. Գ Օր»-այ հանդէսները տեղի ունեցան Հոկտ. 4-ին Մօֆիա Թիքլաէ, Սիլվէն, Քաթար-Փազարճըզ, Ռուսճուք, Շուճէն Պուրկազ, Սթարա-Ջազորա և ուրիշ վայրեր՝ անէն տեղ առաջանցնելով ժողովրդական ընդհանուր խանդավառութիւն, Առանձնապէս բուռն ոգևորութեան մէջ անցաւ տոնակատարութիւնը Մօֆիայում, ուր իրենց մամակցութիւնն էին բերել և մակերանական յեղափոխական կազմակերպութիւնները: Հոգեհանգստաց յետոյ, ի միջի այլոց, ճառասօսեց «Անկախ Մակերգործ» թերթի խմբագիր Փէթէր Մըրճէլը, որ իշխելոց յետոյ տառապանքի եղբայրակցութիւնը հայ և մակերանացի ժողովուրդների միջեւ և պարսեպելոց յետոյ՝ թրքական անարդ բռնակալութիւնը, յայտնեց անխառն հաւատ, որ ո՛չ մի բռնապետութիւն՝ լինի նա կարծիք սուլթաններից թէ Մուսկալի ստորապններից՝ չի կարող կեցնել հայ ժողովուրդը իր ազատագրութեան ճանապարհին... Հայ ժողովուրդը պէտք է շարունակէ ընթանալ իր պայքարի ճանապարհով՝ իր մեծ կուսակցութեան՝ Վ. Յ. Դաշնակցութեան արթուն ղեկավարութեան տակ: Ես լիայտյս եմ, թէ հետո չէ հայ ազատագրութեան օրը, երբ հայկական դաշակը պիտի ծածանի պատմական ու ներքինան Արարատի գագաթին»:

Բուն համազօր փոփոխ անկեցաւ «Մեղիկայ» պահանջում որ ինչպէս էր խուճ բազմութեամբ: Ետտեղը մնացին առանց տեղի, դարձեւ սանկուլինների վրա: Գրական ու երաժշտական մպակն, մէջ ընդ մէջ, տանիստեցին ընկ. Յ. Տէվէճեանը և մակերանական «Նիլոնտէն» կուսակցութեան ներկայացուցչէ Գիկիթը Անտոնօզը, որի ձապը բնդունեց յաճախ կրկնուող ծափահարութիւններով: «Մտքով կերթամ 35 տարի յետ, առայ մակերանացի գործիչը, երբ Քրիստոսափոր Միլլալէյեան, Ռուստոն և իր ընկերները հիմք դրին Դաշնակցութեան և մակերանացի ընկերների հետ միասին, զբաղու ու սրով ճրագրեցին ձեր հայտնիքի և մեր հայտնիքի ազատութիւնը: Երկար է շարքը այն մեծ պայքարի, որ սկսուում է Պոլսո, Վան, Սասուն, Մուշ Եարիստապոլս, Սեյանիկ, Քօսթուր, Օջրիա և վերջնաում Հայաստանի և Մակերգործի ինձներում մղած անմոռնալի ճակատամարտներով ընդդէմ Քրիստոսի և Երրորդ Միլլազայնականի վիճակներին: Այդ օրից մինչև այսօր մակերանացիներին շատ զոհեր տուիք, մեծ յաջողութիւններ և յուսախարութիւններ ունեցանք, բայց մէկ բան սովորեցինք — յայ չընդ կըտպանան պետութիւնների վրա, որոնք ամօթ իրենց, թող տուին պորձանքու մեր դատը, որպէս փոխանակութեան միջոց, որպէս դրճ ձեռք

բերելու համար քաղաքական և տնտեսական յաջողութիւններ: Մենք սովորեցինք նաև այն, որ բոլոր վիճակցութիւններից ամենաարժեքաւորը տառապող և իրենց պարտութեան համար պայքարող ժողովուրդներն են վիճակցութիւնն էն»:

Հոկտ. 4-ին «Հայաստան» թերթը լոյս տեսաւ բացարձիկ համարով՝ ամբողջապէս նւիրւած Վ. Յ. Դաշնակցութեան և տպով մի քանի պատմական թանկարժեք «յիշողութիւն»-ներ և հետաքրքրական յօւսածներ:

«Վ. Յ. Դաշնակցութեան Օր»-ը փառաւոր անցաւ և Ռուսմանիայում Այսպէս, Բուրեռուճ հանդէսը տեղի ունեցաւ ընկ. Գ. Ղապարեանի նախադահութեան տակ: Օրուայ զվարար տոնակատեսներն էին ընկ. Ա. Գրիլստոնտոնեանը Ս. Արարատեանը:

Յաւաստանում, մի շարք քաղաքներում — Աթէնք, Յիքս, Լուսիոն, Միտիլլի և այլն — նոյնուպէ կազմակերպեցին հանդէսներ, որոնք անցան ժողովրդական խանդավառ միտարարում: Հակառակորդները փորձեցին տեղ-տեղ արգելքներ հանել, բայց՝ ապարդիւն:

Ոչ պակաս խանդավառութեամբ «Վ. Յ. Գ. Օր»-ը տօնեց և Երևանում — Ալեքսանդրիա Հոկտ. 4-ին, Գանիբե և Քաթարճ Հոկտ. 10-ին: Ալեքսանդրիայում ընկերներից այցի դնային գերիդճանտուն՝ համալսեցաւ ընկերներին: Ապա ազգային վարժարանի սրահում տեղի ունեցաւ թէյտեղան ընկերների և համակիրների համար Ռանախօսեցին ընկ. Ն. Աղաբեան և Լ. Շանթի Գահրէի հանդէսը ունեցաւ համաժողովրդական բնարութիւն, նախադահեց ընկ. Լ. Օհանջանեան, բանախօսելու համար Ալեքսանդրիայից եկել էին ընկ. Ն. Աղաբեանն ու Լ. Շանթը, որոնք ճառերը առաջ բերին անխառն ոգևորութիւն ներկաների մէջ: Վերին աստիճանի ջերմ ու ձեռքական միջոցորտում անցաւ «Վ. Յ. Գ. Օր»-ը և Քանիթայում, ուր մեր ընկերները ճառերով, երգերով, արտասանութիւններով և զանազան տօնական արտայայտութիւններով անցկացրին Հոկ. 10-ի երկուն:

«Յուսաբեր»-ի հոկտ. 10-ի համարը լոյս տեսաւ Յ էջից բազմացած և ամբողջապէս նւիրւած Դաշնակցութեան:

Երուսաղէմ «Վ. Յ. Գ. Օր»-ը տօնեց հոկտ. 11-ին յունաց «Սիօն» պարտեզում, երկուսն մեծ բազմութեան ներկայութեամբ: Գրական-երաժշտական մտայն յետոյ բանախօսեց ընկ. Վ. Արժրուսին, որ փառաբանեց Դաշնակցութեան 35 ամեայ գործունէութիւնը: Ընկերաց ճառը ընդունեց ուժեղ ծափերով, Հանդէսը թողեց լաւ տպաւորութիւն ամենքի վրա՝ նպատակով մեր զարգաւաչի տարածման Պարտախոսում: Հակառակ քաղաքական աննպատ զայմանների և երկրի խանակի վիճակի՝ Միւրիայում և «Վ. Յ. Գ. Օր»-ը առարկայ դարձաւ ժողովրդական ընդհանուր խանդավառութեան, Հոկտ. 3-ին «Նոր-Փիւնիկ» թերթը իր էջերն ամբողջապէս յատկացրեց Դաշնակցութեան նւիրւած յօւսածներին ու նկարներին Յաջորդ օրը, հոկտ. 4-ին, Քէյրթաբում, տեղի ունեցաւ բազմամարդ հրապարակային ժողով ընկ. Ի. Թիւրինճեանի նախադահութեամբ: Մէջ ընդ մէջ, երգերի և արտասանութիւնների հետ բանախօսեցին ընկ. Ա. Յովհան-

նէտանը, Շահան Նաթալի և յայտնի գրագետ Երուանդ Օսեանը՝ Յատուկ ուշադրութեամբ լսեց Եր. Օսեանի ճառը, որը, ի միջի այլոց, առաջ, թէ ինքը «ոչ պիտի գովէ Դաշնակցութիւնը, ոչ էլ պիտի քննադատէ, երբու դերերն էլ Հաւատարարպէս գտնելով անկողնաշաճ Անկախած է, որ Դաշնակցութիւնը միւս բոլոր կուսակցութիւններէց եղել է ամենագործը և շարունակած է ամենից շատ ազդել Հայ Հանրային կեանքի վրա Ասածոյ վրա յոյս դնելով Հայը սղտաութիւն չի ստանայ, Ասուած ճուռացի է մեզ: Իննք է, որ պէտք է ստեղծենք ասուածներ ազատութեան տիրանալու համար... Անկարելի է, որ դաշաբարը, զոհարութիւնը և թափուած արիւնը ի վերջոյ սպաւած արցիւններ չտան»:

Քեռապուլու «Հ. Յ. Գ. Օր»-ւայ տօնակատարութիւնը զուգարկեց «Հ. Յ. Գ. Յան» բացման հանդէսին, հոկտ. 25-ին՝ ընկերներէի ու Համալիրներէի մեծ բազմութեան մասնակցութեամբ: Հանդէսին նախադահլից ընկ. Ա. Ինչէճիկեանը, որի բացման ճառից յետոյ եղան բանախօսութիւններ, արտասանութիւններ ու երգեր: Հաջեպուլու Հոկտ. 18-ին, «Մինէմա Օրիանթալ»-ի ընդարձակ սրահը ծայրէ ծայր լիցն էր երկսեռ բազմութեամբ, որ ջերմ ոգեւորութեամբ ծափահարեց օրւայ ատենախօսներին, երգիչներին և արտասանողներին: Յաւեթայ շրջանի հանդէսներին խառնարկին յորդաւատ անձերները, բոյց և աշիւտ Հոկտ. 18-ին Խաբազիկի ազգային վարժարանում սեղի ունեցաւ հանդէս, որին, սակայն, շատերը զիարդացան մասնակցել սեղի սա կատարեան պատճառով: Անէն կողմից յայտնուած փափաքի վրա որոշեց շրջանի միւս գիւղերում էլ կազմակերպել նման հանդէսներ:

Յիշե՛ք նաև «Հ. Յ. Գ. Օր»-ւայ հանդէսը Թաւրիզում, Նոյ. 28-ին: Լիլուայի պարոցի սրահը լիքն էր հոծ բազմութեամբ: Թե՛ն զարդարուած էր Քրիստոսփորի, Ռուստմի, Զաւարեանի, Վաանեանի մեծապիւր նկարներով: Նախադահլից ընկ. Ալ. Յովհաննէսեանի բացման խօսքերից յետոյ եղան խորհրուած բանախօսութիւններ ընկ. Գ. Յակոբեանի, Հայր Աբրահամի և Յակ. Ճէր-Յաղորեանի կողմից: Կային արտասանութիւններ, երգ ու նազ: Ծառերը ընդունեցին ոգեւորւած ծափերով:

Այս անգամի սեղեկութիւնները հազու թէ կարող են սույ անբողջական պատկերը «Հ. Յ. Գ. Օր»-ւայ հանդիսութեանց բոլոր շրջաններում: Անէն սեղ, ուր այդ օրը կարելի եղաւ կազմակերպել Հաւաքայթիներ ու հանդէսներ, երեսն եղան ժողովրդական լայն գանդարութիւն և երեսասարգութեան անխառն ոգեւորութիւնն ու համաիրանքը հանդէպ մեր կուսակցութեան: Մի շարք վայրերում կատարուած հոսնդէսներ ծափն զգալիաբար, սեղեկութիւններ ջուներէք մեր ձեռքի ստի: Բոյց այս թերի պատկերն էլ բուսական է տեսնելու համար, թէ բարյական ու կազմակերպական ինչ խոր արձաններ է ձգել Հ. Յ Դաշնակցութիւնը հայ իրականութեան մէջ: Իբրևս առաջին փորձ, «Հ. Յ. Գ. Օր»-ւայ տօնակատարութիւնը կարելի է համարել անպայման յաջողւած: Յաջող ստիլ, յոյս ունիք, այդ օրւայ հանդէսները կանցնեն է՛լ ակելի կազմակերպուած և զորափարական ու ներթական ակելի հարուստ նաճուճներով:

Ինչպէս և ենթադրու էր 10-րդ Ընդհ. Ժազովը «Հ. Յ. Գ. Օր»-ը եղաւ սրբազանիկ ու կազմակերպութեան, կուսակցական գոյափարների ժողովրդականացման ու դաստարակական հզօր միջոց: Մեր ճարմիններն ու գործիչ ընկերները ուշապիւր ու մակրաջնկին ուսումնասիրութեան առարկայ պէտք է դարձնեն այդ օրւայ հանդէսներէի ու սրբազանիկ կողմարդութեան դրական ու բացասական կողմերը և աշխատեն ապագայում, խուսափելով բացասական երեւոյթից՝ լայնօրէն օգտագործել դրական կողմերը: «Հ. Յ. Գ. Օր»-ը այսուհետեւ պէտք է լինի զաշնակցական սրբազանիկ եւ կազմակերպութեան օր:

## ԹՂԹԱԿՅՈՒԹԻՆՆԵՐ

ԱՆԻՐԱՊՈՎԿԱՅԵԱՆ ԽՈՐՀՐԳՎԵՐԻՆ ԳՐԵՆԱԿՅՈՒԹԻՆԵՐ  
Ե Թ Հ Ո Ս Յ Շ Ե Ն Ը

Թիֆլիս, 9 Հոկտ.

Ձեռնածօրէն համայնախորհրդը Անդրիովկայի վարչաձեւը կազմակերպեցին այնպէս, ինչպէս որ այդ նախատեսուած էր մեր 1907 թ. Երազկըրը բոյց փաստօրէն նրանց հաստատած Դաշնակցութիւնը այնպիսի էութիւն ունի, որ նրա սակ Հայաստանը և հայութիւնը Անդրիովկասում աւելի հեռուողականօրէն իրաւարկուած և շահագործուած են, քան թէ ցարական ռեժիմի ժամանակ: Աւելին՝ Հայաստանն այսօր ակելի վառթար տնտեսական շահագործման է ենթակայ, քան թէ որ և է ուսածրթ գտրթ ինքրիպախտական պետութիւնների կողմից:

Անդրիովկայի Խորհրդային Դաշնակցութիւնը հիմնուած է հայութեան ազգային և տնտեսական իրաւարկներն վրայ, որովհետեւ երեք պետութիւններից՝ երկուսը ստացել են ի հաշիւ երրորդի (Հայաստանի) Այսպէսպարը, Եւրոպր-Նախիջուանը, Ղարաբաղը, և Գանձակի յուսային մասը: Հուսատանի ներկայ վարիչները ոչ մի օթ չունենալով բուն ժողովրդի մէջ՝ որպէսիկ կարողանան ուսանայ վրացի և թաթար կոմունիստների զինական և քաղաքական օժանդակութիւնը իրենց բուսակցութիւնը Հայաստանում հաստատ պահելու համար՝ զիջել են հայական շրջանները իրենց հարեաններին, որով թէ՛ այդ օժանդակութիւնը ապահովուած կը լինի և թէ՛ հարեան ժողովուրդների շովին տարրերը կը կապին խորհրդային իշխանութեան, տեսնելով իրագործուած իրենց ազգայնական ծրագրերի մաքրումայ պահանջները խորհրդային իշխանութեան օրօք: Դրանով Ռուսիոյ հայ գործակալները հիշառցում են Ռուսիոյ տիրապետութիւնը Անդրիովկասում:

Այս երևոյթը ազգայնացման համար բուսական է միայն մատանշիկ վրացի ազգայնականների (Նայինալ-Իե մոկրսա) այսօրւայ դիրքը հանդէպ խորհրդային Արաստանի: Վրաց տարագրութեան, ազգայնական, շովին մասը, Վեշա-

պիւս գլխաւորութեամբ յարուս է խորհուրդներին, որովհետեւ ոտեղծուած պայմաններու վարստանը արտօնեալ քաղաքական և տնտեսական դիրք ունի Անդրկովկասում և վայելում է այնպիսի բեփմն ներքի կեանքում, որին Հայաստանի ազգայնականութիւնը, իր պայմաններին նայելով, նախանձել կորոզ է միայն:

Քէ ինչով է տարբերուած Հայաստանի իրաւակարգը հարեանների իրաւակարգից՝ ցոյց է տալիս հետեւեալը: Հայաստանում ոչ մի նախկին հասարակական կողմակերպութիւն գոյութիւն չունի այժմ: Իսկ վարստանում զուտ ազգայնական նախկին կողմակերպութիւններից գոյութիւն ունին և վայելում են իշխանութեան օժանդակութիւնը («Գանատիքա») հրատարակչական ընկերութիւնը իր «Գանատիքա» օրգանով: «Ճանաչակիւն» (կօօրհրատներէ մուծութիւնը) Մեօցի է նոյն անկախ կողմակերպութիւնը, և ոչ թէ Հայօսօպի նման դարձել պետական աւանական օրգանների ստրուկը: «Շէփարէնի» մարմնակիրթական կողմակերպութիւնը, ազատ գործում է վարստանի բոլոր սնկիւններում: Թիֆլիզում, ուր վրացութիւնը ազգայնականութեան 25% է կազմում, տիրապետում է բուն կերպով վրացական լեզու: Նոյնիսկ Ախալքալաքի գաւառում բուսական չէ որ բոլոր պարտքներում պարտադիր է վրացերէնը, այլ և գաւառի ազգայնականութեան 7% կազմող վրացիները ունին միջնակարգ դպրոց, իսկ 80% կազմող հայութիւնը չունի միջնակարգ դպրոց: Այդ գրիթէ զուտ հայկական գաւառում գաւառական գործադիր կոմիտէի նախագահն է վրացի, իսկ փոխ-նախագահը՝ թաթար Ռասուլ-զադէն:

Անդրկովկասի թաթար ազգայնականութիւնը հնարաւորութիւն ունի համարյա մակաբնուցող զբաղելու ճալաների աւաջնորդութեամբ: Վերջերս նման մի ցոյց կազմակերպեցին Երեւանի փոքրամիւս մահակականները մի ճալանի աւաջնորդութեամբ և իշխանութեան ծանակցութեամբ: Իսկ և՛ Երեւանի հայը փորձեր ցոյց կողմակերպել, օրինակ, Իմերէ կատարածի առթիւ՝ իշխանութիւնը նրան կը ցրէր գնացրիներով:

Տարիներ է արդէն, որ Նուխու Արեշի հայութեան Մնացորդները քշուով Հայաստանից (Ջանգիրաւարից) թախում են Գանձակի փոքրցիրում. ոչ Հայաստանի «Կառավարութիւնը» և ոչ էլ Արրէշտի կամ Անդրկովկասի միջազգայնական վարիչներ մաս-մասով չեն կտրուած նրանց համար. իսկ Ջնգիրաւարի թաթար փախուսականները վերադարձել են իրենց գլխիցը և յետ ոտաջի իրենց ունեցածը: Այսօր նրանք սակայայն համեմատութեամբ, շատ աւելի մեծ թւով դպրոց ունին, քան թէ հայ ժողովուրդը նոյն պիտի ասենք և նախնիքան-Շարուրի հայ և թուրք գաղթականների մասին:

Արրէշտի թաթարները միշտ յատուկ «գիրուկուն» կըլուած ընկերութիւնների միջոցով հարգարկից են մահակական աշխարհին և Պալոյ մամուլի մուտքը ազատ է Անդրկովկաս, մինչդեռ որ և հայ թիւթի մուտքը թայլարուած չէ:

Մի փոքր օրինակ ևս... Թիֆլիզի հայ թատերախումբը ցարական իշխանութեան ժամանակ շարժական միայն մէկ անգամ կարող էր ներկայացուցնել այս Արախտական թատերախումբը:

րուում, այժմ էլ, չնայած վարստանի «ազատ» կարգերին, նոյն դրութեան մէջ է մեր թատերախումբը:

Այսօրու իրաւագրութեան մասին ինչ վերաբերում է անտեսական շահագործման՝ նա աւելի ցատուուն է և կարգաւ իր հրահրի մասնուում ազգութեան իւրեանչիք երկը բաւուց մէկը («Իմպերիալիստական» խօսքն է, այն ինչ հէնց այդ խօսքով պիտի օրակի Խ Անդրկովկասի և Ռուսիոյ անտեսական քաղաքականութիւնը Հայաստանի վերաբերմամբ:

Հայաստանի առևտուրը կատարում է Թիֆլիզի միջոցով և դրա համար Հայաստանի ժողովուրդը վճարում է Թիֆլիսում (այսինքն վարստանին) փթալին տուրք: Ըստ «Մարտակոչ» (թիւ 230) Հայաստանի միայն մի ստրուայ ազգութեան շարքի համար հայ ժողովուրդը վճարում է 2550 բ. բարսային և 600,000 բ. մաքրային տուրք: Բայց մեր երկրի ազգայնականութիւնը նոյն տարւայ ընթացքում սպառել է ուելի մեծ արժէքով կտորեղէն, այլքը և այլն, և այդ բոլորի համար Հայաստանի կիսաբազմ գրկայցին պիտի վճարէ տուրք վարստանին, որով թէ սպառողն է շահագործում և թէ երկիրը իր եկամուտի աղբիւրներից զրկուած:

Այս բոլորը անուան են ոչ թէ սպէկուլանտները կամ վաճառականները, այլ պետական առևտուր օրգանները: Մարտան բեմին ժամանակները Հայաստանի ամէն մի փոքր գիւղ կարող էր տնտեսական ուղղակի կազմը հաստատել Ռուսիայ հետ, իսկ ներկայ խորհրդային «հաւասար» պիտութիւնների գաշակցութեան մէջ մի անբողջ երկիր պիտի կրկնակի վճարուներ անի իր հարեանին, սրից նա ազատ կը լինէր ամէն մի իրաւակարգում, թերևս նոյն իսկ իմպերիալիստական գաղութներում...

Պ. Արգանը ասում է. «Արգարական յօլածի շրջանակում, մանաւանդ իրը հարցը դրում է միայն սկզբնաւորէն, ոչ մի հնարաւորութիւն չկայ սպառելու այն բոլոր տնտեսական, առևտրական, ֆինանսական և քաղաքական շեւտները, որ Հայաստանին հասցնում է առևտական սպրանքները Թիֆլիզից մատակարարելու սխաւեմը»: Միայն այդանք, ոչ մի տնտեսական իմպերիալիզմի մասին... Յիմարութիւն կը լինէր կարծել, թէ այս իրատեսական իմպերիալիզմը չի ընդունում խորհրդային հայ վարիչների կողմից. ընդունում է, բայց չէ՝ որ նրանք շահագործուած են Անդրկովկասեան ներկայ դաշակցութեամբ, որը գոյութիւն ունի, որովհետեւ Համայնակարները Հայաստանի 1 | 3 մասը գրիծ են Արրէշտանին, իսկ միւս 2 | 3ը մասն էլ վարստանի տնտեսական շահագործմանը...

Փաստերի այս շարքը կարող ենք ընդարձակել ցանկացածի չափ: Բայց այսքանին էլ բուսական է գողափար կողմերը համար այն ազգային և տնտեսական իրաւագրութեան մասին, սրի մէջ դրում է այսօրուս Հայաստանը, որպէսզի մի բուսական հայ բոլշեւիկներ կարողանան իրենց իշխանութիւնը պահպանել այս գոթալու երկրի դիմին:

ԱՐՈՏ

# ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ռոստով, 20 նոյմ. 1925

Մարդ սո՞ժ և նախասինք կ'դրայ այն եւրոպական  
 օգնիչաւոր և անցնից՝ ճամբորդներու վախալեն, որոնք  
 ճարդկային խիղճը կորուսած, սովետական կոմիտարներէն  
 աւաջնորդելով, բանի ճը օր իրենաշարժերով ու կաւքերով  
 կ'դրոնուեն Հոս կը դիտեն ցոյցադրութեան Համար կահաւորած,  
 պատրաստած յատուկ Հիմնարկները (սրբանոց, բանտարի  
 սուն և այլն), և կը վերագրուան Եւրոպա, դեմոկրատիայի  
 յուզած խիղճը խաբելու՝ պոյժաւս դրչնելով նկարագրելով  
 ուսու բանտարի և զիւրացու կեանքը:

Ըստ խորհրդային ճանուրի՝ եւրոպական բանտարները,  
 անշուշտ նման ոտայտը լուրերու վրայ Հիմնուած, ժողովներու  
 մէջ կը յայտարարեն, թէ ուսու բանտարը իրենցմէ ալեկ  
 կեանք ունի Ասոր պատճառն անշուշտ այն է, որ նման  
 պատճառար» ու սարքած պատկերակութիւնները կ'ա-  
 դուազեն ճշմարտութիւնը և աշակերտով մեծամասնական-  
 բռնակալական ուժիմին տակ գարտաւոյ ուսու աշխատու.  
 բրթեան պարտին ամարգորէն կը դուռնաճնեն:

Գտնէ Հայ աշխատարութիւնը այս մտորութենէն  
 զրճ պահելու Համար աւելորդ չեմ սեղիս «Իրօշակի» մէջ  
 քանի մը խօսքով ներկայացնել մեր կոցողութիւնը:

Այս դժբախտ երկրին մէջ անՀաստիք, տաննակներ,—  
 գուցէ մի քանի Հոգար ճարդ կապրին զօժ ու բաւական ի-  
 բնց վիճակէն, լուս ուժիկով ու յարճարութիւններով Սա-  
 կայն ասոնք տէրերն են՝ վերին խումը: Գուցէ կարծիցքը  
 բանտար կամ գիւղացի Երբէք: Բանտարն ու զիւրացին  
 Հ'ուս են անոնց շարքէն: Հոս կը գտնէք նախկին  
 Ն'կողայեան Հայկապետափոխական սպանիս ու ճառարագ-  
 ներ, գաղափարագործի, ճոճնետին յարճարող մարդկներ,  
 ուսուցիչներ են քողարական կէլուի նժարի թեքումները  
 ժամանակին գուշակել և ըստ այնմ իրենց գոյնը փոխել:  
 Ասոնք անցած են ոչ միայն մէկ քաւարանէ, այլ բազմաթիւ  
 Երբեմն մեծարիխտա, ուսանող ժամանակ ուստիկներութեան  
 գրճ ուսու, սպա կապիտ, յետոյ ուղիտակ գարդիական, անկե  
 և ոքք Էս-Է, ձախ Էս-Է և այժմս վերջուպէս կաւ-  
 կ սրճի ճեմանաստական Այս ճարճան տնցած են երկու  
 սարիներու ընկալքին «պարտոյցներ» տարվ և իւրաքան-  
 չիւր կուսակցութեան «Համալցելով» իրենց «անկիզմութեան»  
 մէջ, յասակալէ մեծամասնականներուն Համոցելու Համար  
 աջ ու ձախ գիւղակահարելով, մասնելով, թայանելով իրենց  
 եւէլիքընիւրները կամ բարիկանները Սովետական վերին խաւի,  
 կ'ուստարողներն մի մասը այս «Երգտիտականներն են»:

Ի իջիլ այլըք ըսեմ, որ իրբեմն ազաւթեան Հետեւ-  
 անկելով, ասոնց դեմքը կը բացել և կուսակցութեանն Հոտը  
 կը շարտիս. սակայն այդ անորճը կամիւսէ մըն է, որով-  
 Հետեւ այս ճարտիկները կրկին ներս սպողակելու և բարձր  
 պաշտօններ ձեռք բերելու ճամբան ալեկ գիտեն...

Մարքուր անՀատուկ սակաւութիւն են և անոնց աշխա-  
 տանքը կաթիլ մը ջրի նման կ'անՀնտանայ, փտութեան, զեզ-  
 մութեան ու շահատակութիւններու ծովին մէջ:

Օրինակի Համար ես կրնամ ձեզի պատմել իմ տորած՝  
 Էիւս. Գովկասի քաղաքներէն մէկի կեանքի ճոտին, որը Հա-  
 մեմտարար կուշտ է, Հայաստան, ամուսնաշահ և իտաղոյ

Այս քաղաքին մէջ յիշածս «վերինէն» յետոյ ձեր  
 ուշադրութիւնը կը կեդրոնանայ այն խաւի վրայ, որի ա-  
 նուշը աՀա 10 տարի է կը շահագործէ մեծամասնական  
 չեկիտական Հորբան՝ գիւղացի և բանտար: Գիտէք, որ Ռու-  
 սաստանում եղած են սովի և սովամահութեան տարիներ,  
 երբ գիւղի ու գիւղացիք ճանճի պէս կ'ստորկեցան, երբ երկ-  
 րի սովետական ստորագիւրը գորքով օրկիցցին թշուա.  
 սովահար շրջանները, որպէսզի սովահարները չ'տարածեն,  
 «Ճիւրակի» միւս շրջաններն ա... և իրենց կարմիր խիղճը  
 Հանգստացուցին: Սակայն այսօր սով չկայ. և մոտանող  
 խօսքս կը վերաբերի Հոգաւորաւ շրջանի մը:

Մեր քաղաքին մէջ կեանքը անասահայտ է: Ի՞նչու է  
 կարծէք «պիտակներու» ճանճէն, կամ կատարեցողի-  
 ներու Հրոտակային շարժումներէն՝ Ո՛չ, գործազարկ, կիս-  
 վայրենի և փոզոց նետած բանտարներէն, այն բանտարներէն  
 որոնց տիկտատուրան կը տարածի լայնածաւալ կոյտու-  
 թեան մը վրայ:

Ասոնք բանտար չեն այժմ. անգործ բանտար սոնց չի  
 յարճարի, ասոնք բոսիակներ են՝ կամ «նախկին» բանտարներ:

Մարմինը կիսամերկ, բուրջիւր մէջ փութում, թափ-  
 թփած ու կեղտոտ մազերով, սովորաբար բակտան, զապալած  
 ու կիսավայրենի դէմքով, արիւնուշտ Հոյճոցքով ու ֆի-  
 նական դանակը ցնցողիներուն տակ թազոյցած կը շրջի  
 բոսիակը: Հասակի և սեռի խորութիւն չկայ — Հասասարու-  
 թիւն է: Բարիակը կ'ապրի կաւակալութեան պատրաստած  
 Հանրակացարաններուն մէջ՝ Կուրանի ափին: Ասոնք այն  
 Հանրակացարաններն չեն, որոնք կը պտորաստակն եւրո-  
 պական ճամբորդներուն ցոյց ապուս Համար: Մարագաձեւ  
 փայտէ շէնքի, Հագար ու մի կարկաստնով ու ձուկերով  
 կեղտոտ, խոնաւ ու գարշահոտութեան մէջ կորած: Ասիի  
 շուս Հանրային գիւղեմանոցներ են ասոնք, որովՀետեւ  
 դժար թէ ապրելու յոյս ունեցող մարդ արարածը Համա-  
 ձայնի Հոս օր մը գրուի գիտելու:

ԱՀա աչքիս տեսածը՝ ընդհանուր մարագաձեւ տուն մը,  
 մէկ կողմը պտուկած են խոնաւ դեանին յիՀար ու կմտա-  
 քացած Հիւանդիւր, ասոնց կողքին ինկած են Հին ու նոր  
 մեռելներու դիակները, սրոնց գարշահոտութիւնը կը տա-  
 րածի շուրջը ու միջուրտը սպանիչ կը դարձնէ: Աս այս  
 գերեզմանոցում Հոգեվոր Հիւանդներու ու բացաւոր, լուծ-  
 ւող դիակներու կողքին մահուան թեկնածու, կեղանի բու-  
 սիականի՝ ամբողջ, կմտաքացած ու կիսավայրենի դէմքերով  
 կ'զբաղին իրենց «ուտօրայ աշխատանքով» այլոյնքն ձեռք  
 ձգածը՝ կուտեն և... թուղթ կը խազանէ Ասոնքն Հաստերը  
 կանաչով է որ կը սնին, միւս երջանիկ մասը, աւելի ճար-  
 պիկները փողոցները կը շրջին, աղբանոցներէն ուտիլիք կը  
 Հուսքեն՝ ոսկոր, կերակուրի միացոյր կ'ալին:

Ք ԱՀա այս կենդանի մեռելներու վահանակ է, որ կեանքը  
 անապահայտ կը դարձնէ: Ասոնք կը շրջին քաղաքն ու շրջ-  
 շակայքը և օրը ցրակին կը դբաղին գորութիւնով, թայանով  
 սպանութիւնով: Թայանը կը կատարի ամենապարզ ու  
 փոքրիկ գորութեանն միւսնաւ արիւնուշտ դեպքերը:

Օրինակ, շուկայի մէջ պարէն գնած ես և ուշադրութիւնդ մի բույն վրայ չեմ. ինկոյն գործիւրդ կամ գնածդ կ'անհետանայ. Բարիակները կը հետեւին քեզ կրնկուրտ, և այնքան շատ են, որ տարախի չես կրնար:

Տաւ կը հասնին, եթէ ճաշացմամբ քանի մը բույն գուռ բաց ձեռքեր, անմիջապէս ետեւէջ ներս կը սարդին և հանդիպած իբր կ'իջարհեն: Գիշերները գուռերը ու լուսաճառները բաւարար կ'ան կարելով ստոնիներ կը կողպտանին: Առկայն քանի յարմարեալ է հարգատի գործիւնը, միշտ կըլլայ ընդի դռնի բռնագրասումը:

Երկուցիւն ժամը ճէն ետքը պատահած քաղաքացու վերաբիւն և ողջ հարգուող վրայէն կը հանեն ու կը թողու ձեռքը Եղած են դեպքեր, որ այս թշուառները ձեռնուան ցրտին, միջեւ առն հասնիլը պարտած, ու մեռած են:

Այս երեսուցի այնքան ընդհանրացած է, որ մարդիկ, միտով, Ց-էն յետոյ անհրէն դուրս չեն կլլեր, այլ խմբովին կըլլին Յոմախ բաւարարուածը կը վերջանայ սպանութիւնով և որ չըլլար, որ քանի մը սպանութիւն չկատարէ բարիակներու ձեռքով: Պաշտօնական ժողովներուն (ի միջի այլոց ստոնց թիւը տհաշու է) սենիդիները կը պահանջեն «ընկեր կոմիտաներէն» որ միջեւ Ց-ը ամէն գործ լինայ, քանի որ ոչ ստիականութիւնը, ոչ ալ ողջ կառավարութիւնը չեն կրնար երաշխաւորել Ց-էն յետոյ ստան վերադարձողի կեանքի սպահովութիւնը: Գործին թէ ժողովուրդը ընտելացած է այս կեանքային վիճակին և հեղանակով կը կրկին «միջեւ ժամը Ց-ը քեզի ժամը Ց-էն ետքը ինձի» բարիակական նշանաբանը:

Ինչպէս կը տեսնէք «բանարի զիկատուրան» կատարեալ, բայց առ ոչ մի ժամը Ց-էն ետքը միայն:

Ըսինք արդէն, որ թայանի և կողպտախ հոգի վրայ ոճիրներն ու սպանութիւնները անպակաս են:

Ա. քաղաքում բժշկի մը Կեան տղանուով, 25 թ. գարնանը տուն վերադառնալով «անգղուշութեամբ» քանի մը բույն լուսանուողը կը բանայ օղբ մարդիւր համար, և ինքը բուզմոցի մը վրայ կը պառկի, արդէնքի փեղիկը փակէ և սպա բնանայ: Օրուայ ուշտատանքէն զարթած բունը կը տանի Քանի մը բույն չանցած դարձանուառ բարիակ մը, ֆինական զանակով զինեալ ներս կը ցատկէ բաց լուսանուառէն և կ'սկսի պառկած բժշկի կողքը կարիս Սարսափած բժշկի վի կը թախ, բնագրական ուժովն շարժումներով յետ կը մղէ գանուիլ և կ'սկսի կոշիկի հարձակումներով պաշտպանել: Երկար ճառագաստ մէ ետքը, յուզած բարիակը կը յաջողի կրկին լուսանուառն դուրս ցատկել և անկայանալ մութին մէջ:

Մերկը զլիսաւոր փողոցներուն վրայ կան պահակներ (քաղաքապահներ) սակայն դիշերը, ճանաւանդ քաղաքի կեցողներն քիչ հետաւեցիլը բարիակներու թաղաքառութիւններ: Ես. կային մէջ շատ անգամ անբարձ խանութներ կը դառարկին, թեպէտեւ հոս պահակները անլի շատ են... Բարիակը չի քաշիլ իշխանութիւնէն, չի վանար քանտարկութիւնէն, որովհետեւ զարքը արդէն քանի բայցէն կը մեռնի, իսկ բանալին մէջ գոնէ նազազայն սնանկ մը պիտի ստանայ: Յի վախար ճահէն և թփեկայէն: Եղած են պեղա-

կահարութեան դեպքեր, սակայն արարները նոյն ոգով ու եռանդով կը շարունակեն իրենց ընկերներու գործը:

Ելապէս վերած է բանարին ու զիւրացուն սովեակտե կործիր բթամուութիւնը, և իշխանութեան ու զիկատուրայի բարիակներով շրջապատած զանանք:

Լուս չէ նաև գործի զուրս կանթած բանարներու վիճակը: Ձեռ կրնար յիշիլ ստոնցմէ մէկը, որ գոհ ըլլար իր տեսանակով վիճակէն. բարբը կիտաբալց են և կարելի մէջ:

Ես ուսուցիչ էի: Մեղի հրահանգած էր բարձր կարգերու աշակերտները որոշ հարցացուցով ուղարկել բանարներու մաս, որպէսզի տեղեկութիւններ հաւաքեն անոնց տեսանականի մասին: Բանարներէն շատերը չէին ընդունիր մեր փարբիկ հասարակագետները, երեսներուն պառայով «Ձեզ պէ» շտախն են զահլաներս տարիլ: Թողէք մեր ինչով տապակիւնք»: Անոնք որոնք կ'ընդունէին և հարցերու կը պատասխանէին, կը պարզէր, որ բարձ կուտան կիտաբալց, ողորմելի վիճակ:

Գեանքը սուգ է. սարանքները շուկայէն օրը օրին կ'անհետանան: Մտիլ վաճառականները գործ շարունակել չեն կրնար. «Թիկուր» սենցոյղ և պետական հիմնարկներէն «ամէն» ճանապարհով արարաք դուրս բաշտիրն են, որ դեռ կը դիմանան:

Այս է ընդհանուր կացութիւնը ողջ Հիւս. Կովկասի մէջ: Կեանքը կ'ընթանայ հետեւի, մի կտոր հաց մարելու համար, որը այնքան ալ դիրքին չէ բանարի և զիւրացու թաղառութեան երկրում: Արդեօք այսպէս կապրին մեր վիճակին անխանակոյ՞ Եւրոպայի բանարները...

է. ՄԱՍԵԱՆ

ԲՆՅՈՒՆԸ Է

ԲԱՒԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ «ԳՐՕՅԱԿ»

1926 ԹՈՒԱՅԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲՆԾԵՆԳԻՆ

1.— Մրանտ, Սլերխ, Պելճիքա, Պուկարիա, Յունաստան և եւրոպական միւս երկիրները տարեկան 25 Փրանք.

2.— Հիւս, և Հորուս. Ամերիկա, Անգլիա և զարդութիւնները, Արկատոս, Պալեստին, Միջագետք, Պարսկաստան և միւս երկիրները տարեկան 2 տողար

Առանձին թիւը կ'արժէ 2,50 Փր. կամ 20 սենթ. Բաժանորդագրութեան և վարչական գործերու համար գինի՛

S. Ter-Tovmassian  
3, rue Lesage, Paris (20) France

Le Gérant: E. BUAT

Imp. TURABIAN 227, BD. RASPAIL, PARIS